Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

15713

Պատմութիւն
նեռուող կին մը

Կ. Պոլիս
1862

891.99
Պ-31

2003

# ՊԱՏՈՒՀԱՆԷՆ ՆԵՏՈՒՈՂ

# ԿԻՆ ՄԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՄԻ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յ. Ն.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԵՆԴԻՍԵԱՆ

— 1862 —

891.99
Դ-31

# ՊԱՏՈՒՀԱՆԷՆ ՆԵՏՈՒՈՂ

# ԿԻՆ ՄԸ.

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՄԻ ԱՐԱՐՈՒԱԾ

---

ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յ. Ն.



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

— 1862 —

1807

# ԱՆՁԻՆՔ

| | |
|---|---|
| Տ'ԱՎՐՔՈՒՐ · | Հարուստ վաճառական · |
| ՐԱՈՒԼ · | Տ'ավրքուրին եղբօրորդին · |
| ԱՆՆԱ ՐՈՓ · | Րաուլին վարձակալը · |
| ԵՒԳԻՆԷ · | Րաուլին կինը · |
| ԼԷՍՊԱՌԻ ՄԱՐՔԻԶՈՒՀԻՆ · | Եւգինէին մայրը · |

7484-17

# ՊԱՏՈՒՀԱՆԷՆ ՆԵՏՈՒՈՂ ԿԻՆ ՄԸ.

## ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՄԻ ԱՐԱՐՈՒԱԾ

*Տեսարանը կը ներկայացնէ ձախակողմը պարտէզի մը ծայրը գեղեցիկ պատշգամ մը, որուն փոքրիկ դուռը դաշտի մը վրայ կը նայի, պատշգամին առջին յարկը լայն (պալգօն) մը կ'երեւայ երկու սիւներու վրայ հաստատուած։ Պատշգամին վերի կողմը պարտէզին պատերը կ'երեւան, աջ կողմը ագարակի մը մուտքը։ Խորը մեծ ճամբան եւ հեռուէն գիւղի մը զանգակատունը եւ տուները։ Դարձեալ աջ կողմը եւ ագարակին դրանը մօտ ծառ մը, որուն տակը կանանչագոյն նստարան մը կը տեսնուի. եւ ագարակին դրանը քովէն մինչեւ տեսարանին կէսը ծառաստաններ։*

### ՏԵՍԻԼ Ա.

Տ'ԱՎՐԻՔՈՒՐ (*Աջ կողմէն գալով ու նկած ճամբան դարձած*).

Տ'ԱՎ. Թշուառակա՛նը... դղեակէն քանի մը քայլ հեռու կառքը կործանել եւ անանկ պատուական ճամբու մը վրայ. (*հառաչելով ձայնը ըլել յետաձնելով*) փոս մը կա՛յ, աւաղ, օդին մէջ նայելուդ քիչ մը ուշադրութիւն ընէիր... (*առաջ երթայ*) Պարոններ ալ կառավար չէ՞ մնացեր. երկաթուղիները այնչափ շատցան, որ անոնք ալ յուսահատած կառավարութեան ուսմունքը չեն սորվիր... (*նորէն նկած ճամբան դարձած*) ի՞նչ կընէ, ի՛նչ է, կուզէ կառքը մինակ վերցնել (*ագարակին դուռը ցուցնելով*) խնայէ, զուր տեղը այդչափ աշխատելուդ, դնա գտնէ ատ ագարակին մէջի մարդիկներէն քիչ մը օգնութիւն խնդրէ, ես մինչեւ դղեակը ոտքով կերթամ, ահա ագարակին վարի ծայրի պզտի պատշգամը, ուստի մէկ քառորդէն կրնամ դիւրութեամբ դղեակին գաւիթը հասնիլ... (*տեսնելով որ ագարակին դուռը կը բացուի*) կարծես թէ պատշգամին դուռն ալ ինծի համար կը բացուի, լաւ, այնչափ տեղ քալելու ու յոգնելու ագարակին մէջէն երթամ. ճամբան աւելի կարճ է։

### ՏԵՍԻԼ Բ.

ԱՆՆԱ. (*պատշգամէն ծռելով ձեռքին ալ նամակ մը բռնած*) ՏԱՎՐԻՔՈՒՐ

ԱՆՆ. (*նկած ճամբան դարձած*) Պարոն, հանդարտ եղէք, հիմայ նամակը տեղը կը հասցնեմ, աւանդ ուրիշ ըլլալը մէկու մը իմացընելու. ինծի Աննա Շափ կ'ըսեն։

Տ'ԱՎ. (մօտենալով) Աննա Շոփ օրիորդ . . .

ԱՆՆԱ. Ո՜հ Տէր Աստուած, պարոն մը կայ եղեր հոս, անտարակոյս բոլոր խօսքերս լսեց, սա՛նայէ անունս անգամ գիտէ եղեր :

Տ'ԱՎ. Պարոն Բասիլ տ'Ալէքսերին բնակած գիւղակը ու ագարակը աս չէ՞ :

ԱՆՆԱ. Չէ, Պարոն Բասիլ գիւղակը չի բնակիր :

Տ'ԱՎ. Ի՞նչպէս, ի՛նչ բսել կուզես :

ԱՆՆԱ. Ինչ պիտի ըլլայ, բսել կուզեմ թէ անկէ ելաւ :

Տ'ԱՎ. Ե՞րբ, որչափ ատեն կայ :

ԱՆՆԱ. Ամիս մը կայ, եւ անկէ ՚ի վեր սա պզտի պատշգամն է իւր բնակութեան տեղին :

Տ'ԱՎ. Ի՞նչ անխելքութիւն, փառաւոր գիւղակը թողուլ, ու այս խեղճ տեղը բնակիլ :

---

## ՏԵՍԻԼ Գ.

Առաջինները եւ ԲԱՍԻԼ (պատշգամէն ելլելով).

ԲԱՍԻԼ. (անհամբերութեամբ Աննային) դեռ չես դարձեր, ի՞նչ կ'սպասես հոս ու կը խօսակցիս այդ պարոնին հետ. (տարակուսութեան ազդակներ արտայայտելով եւ տ'Ալէքսերին Գիրքը նետ-ռելով) ա՜հ հօրեղբայրս, իմ սիրելի հօրեղբայրս :

ԱՆՆԱ. (զարմացմամբ) Ի՞նչ, պարոնը ձեր հօրեղբայրն է եղեր :

ԲԱՍԻԼ. Ի՜նչ երջանիկ օր է այս ինձ համար, ուրախութիւնս չափազանց է սիրելի հօրեղբայրս նորէն տեսնելուս, բայց կ'աղաչեմ, Աննա շուտ բեր նամակս տեղը հասցուր :

ԱՆՆԱ. Կերթամ. Պարոն, կերթամ, մեղք հազար, որչափ կու բախտանայի թէ որ սրտինց խօսակցութեանը ներկայ գտնուէի :

ԲԱՍԻԼ. Աննա, գնա՛, ժամանակ մի կորսնցներ :

ԱՆՆԱ. Անհոգ եղէք, պարոն տուած յանձնարարութիւննիդ կը փութամ որչափ որ կարելի է շուտով կատարելու. (ինքնիրեն) բայց նաւա՛ղ. շատ կը ցաւիմ որ չեմ կրնար սրտինց ուրախութեանը մինչեւ վերջը ականատես ըլլալու, որչափ դուարթ է այդ երկոք սրտերնին, ինչ եւ իցէ ամեն բանէ առաջ պէտք է որ ապսպրանքս կատարեմ (այս ըսելով կը մտնէ ներս) :

---

## ՏԵՍԻԼ Գ.

ՏԱՎՐԻՑՕՒՐ, ԲԱՍԻԼ

ԲԱՍԻԼ. Չափազանց երկայն երեւցաւ ինծ, սիրելի հօր եղբայր իմ. քու եռամեայ հեռաւորութիւնդ :

Տ'ԱՎ. Շնորհակալ եմ, սիրելիս, այսպէս պէտք է ըլլայ եղ-

բօրբոքուող մը սէրը, հարկաւ ինծի դէմ քիչ մը վշտացած ըլլալու ես ։

ԲԱՌՆ. Ո՛չ, ոչ երբէք ։

Տ'ԱՎ. Այո՛, այո՛, կը խոստովանիմ որ առ քեզ ունեցած պարտքերս չկատարեցի ։ Հարսանեացդ օրը ինծի ներկայ գտնուիլ կը վայլէր իբրև հայր և իբրև մայր. յիրաւի հօրեղբայր եմ բայց գործի տէր ալ եմ ։ Այն միջոցին անկարելի եղաւ ինձ գործաւորներուս քովէն հեռանալ, որովհետև ինծի դէմ գրեթէ ապստամբութիւն մը ծագեցաւ մէջերնին, ասով ըսել չեմ ուզեր որ գործաւորներս հաւատարիմ չեն ինձ, բայց . . . ց չար խորհուրդները . . . դու ալ գիտես . . . . ։

ԲԱՌՆ. Ի՞նչ կըսես, դու ալ հաւանեցար իրենց ։

Տ'ԱՎ. Ո՛չ երբէք, դու ալ ուրիշներուն պէս դեռ չես ճանչցեր զիս. գիտեմ որ ամէնքը զիս սնափառ և հպարտ մը տեղ դրեր էին, բայց սխալեր դատեցին, ինչու որ ես արհեստը այնչափ կը սիրեմ որ, մարդկութենէ հրաժարելով, կամօք արհեստաւոր եղայ, հիմայ ալ վիճակէս խիստ գոհ եմ, կը տեսնեմ որ իմ վրաս այն անտեղի կարծիքները ունեցողներէն մէկն ալ դու ես, հօրեղբայր ըլլալովս ուրիշին կամացը անձնասէր ու դիւրահաւան մարդու մը տեղ դրած էին զիս ։

ԲԱՌՆ. Ո՛հ, ինչեր կ'ըսես, հօրեղբայր իմ ։

Տ'ԱՎ. Իրաւ է որ դիւրահաւան եմ, բայց միայն երբ իմ կամացս յարմար բաներ կատարեն ինձ, այն ալ ուզածիս չափ, տես իմ գործաւորներուս գործքով ալ յայտնեցի . . . . խենդ եմ որ ըսածներնուն հաւանիմ, աւելի լաւ կը համարիմ բոլոր գործարաններս գոցել ու քաշուիլ ։ Բայց երբոր խելքերնին գլուխնին գալով ըրածնուն վրայ զղջացին, ու առանց պայմանի նորէն հպատակեցան այն ատեն իրենց ներեցի ու առջի պէս սկսայ զիրենք սիրել ։ Մտիկ ըրէ, ատենօք զինուորական աստիճանի մէջ ալ գտնուեր եմ ես ու գնդապետ էի, երբ զինուորներուս մէջ դժգոհութիւն կամ անհնազանդութիւն մը պատահէր, մէկէն գինւոյ գաւաթները բերել կուտայի, որոնց մէջ հաշտութիւնը կը փայլէր, խաղաղութիւնը կը սիրէր ու այսպէս կ'ըսկսէինք երգել ։

## ԵՐԳ

Ո՛հ, ինչ բերկրանք ըլլալ զինուոր
Նա ինքն հայրենի տան
Քաջութեանք կայ պաշտպան
Եւ ուրախ ու զուարթ
Սիրահւոյն գինի ծայէն

Յորձանի անմեհեր
Անդ 'ի վէն և 'ի մարտ ։
Ո՛հ, ի՜նչ քերկրանք ըլլալ զինուոր
Մինչդեռ փողըն ահեղ կը հնչէ
Թմբուկին հետ ձայն կարձակէ
Սամնոյ նա հեգ 'ի հանդէս
Դիմադրաւ, չէ՞ն, զուարթերես
Լսեցէք այս ձայն յաղթութեան
Որ է նշան մեծ խնդութեան ։
“ Եղբարք խմենք, մեր պարծանաց ,
„ Խմենք զօրաց պետակն կենաց
Ո՛հ, ի՜նչ քերկրանք ըլլալ զինուոր
Հաշտութիւն, շնորհ իւր քաջ բազկին
Մինչ բերէ զինին իւր ընիկ երկրին
Պարզէ աչաց նոր, նոր տեսարան
Զորադին գումարուած գալին մի՜ձայն
„ Նոյն ինքն է, այս, փրկիչ փառքն է,
Օրհորդն անգին ժպտի սիրուն
Ծերունին եւս, մինչ քաջն անցնի
Ձեռն 'ի փեղսյր կը տանի խոկոյն
Մօրն ու Սիրուհւոյն սրտին խնդում
Անչափ անբաւ է և անպատում,
Ո՛հ, ի՜նչ քերկրանք ըլլալ զինուոր ։

ՌՈՒԲ. (Խորհելով) Իրաւ կըսես, հօր եղբայր իմ ։

Տ'ՈՎ. Այս առթիւ ատենդըրանելով, եկայ նոր հարսս տեսնելու ու գրկելու, շատ գեղեցիկ ըլլալու է անշուշտ ։

ՌՈՒԲ. (Շփոթելով) Այո, այսպէս է, հօր եղբայր իմ ։

Տ'ՈՎ. Իւր մօրը պէտք է նմանի անշուշտ, վասն զի իւր մայրը Լեսպաւի մարքիզուհին, որ նոր ատենօք մեր Ֆլանտրա երկրին մէջ բնակեցաւ քիչ մը ատեն իւր գեղեցկութեամբը երեւելի էր. Հպարտ գեղեցկութիւն մը բնաւորութիւնն ալ նոյնպէս ։

ՌՈՒԲ. (Մտախոհութեամբ) Ուրեմն կը ճանչնաս զինքը ։

Տ'ՈՎ. Ոչ թէ միայն կը ճանչնամ, այլ մինչեւ անգամ քիչ մնաց որ պիտի ամուսնանայի հետը, բա . . . յց իւր ամենուն վրայ տիրող ու իշխող ըլլալու ցանկութիւնը . . .

ՌՈՒԲ. Իրաւունք ունիս այդ մասին ։

Տ'ՈՎ. Վերջապէս, անկից ինչ որ կուզէ, ան ըլլայ, դու զինքը չաւիր, հապա իւր աղջիկը, որուն ազնուութեանը ու բարուց հեզութեանը վրայ գովեստներ լսած եմ ։

ՐԱՈՒԼ. Անոր համար է որ ես ալ զինքը շատ կը սիրեմ ու կը պաշտեմ։

Տ'ԱՎ. Այդպէս ըլլալը ես սկիզբէն հասկցայ ու սիրտս կը դողայ։

ՐԱՈՒԼ. Ի՞նչու համար։

Տ'ԱՎ. Որովհետեւ չափազանցութենէ միշտ կը վախնամ։

ՐԱՈՒԼ. Ի՛նչ, իւր ամուսինը մարդ շատ սիրելը ամօթ է։

Տ'ԱՎ. Հապա, ոչ թէ միայն ամօթ է, այլ միանգամայն վտանգաւոր ալ է, գիտցիր, սիրելիս որ բնութեան մէջ ամենայն ինչ խնայողութեամբ պէտք է գործածել, մինչեւ անգամ սէրը, ինչու որ եթէ այնպէս չըլլայ, ամենէն հարուստներուն անգամ շուտով քսակնին կը սպառի։

ՐԱՈՒԼ. Ա՜հ, հօրեղբայր իմ կը տեսնեմ որ ամուրիի մը եւ ծեր ամուրիի մը նման կը խորհրդածես։

Տ'ԱՎ. Ո՛չ, ո՛չ, սիրելիս, ես խոհեմ մարդու մը նման կը դատեմ եւ ասանկ պարագայներու մէջ միշտ ապագան կը գուշակեմ. մտիկ ըրէ, երբ մէկը կամուսնանայ, մէկ ամսուան մէջ կը յայտնուի, իւր մինչեւ վերջը ունենալիք վարմունքը, եւ եթէ այն միջոցին շատ աղնիւ շատ քաղցրաբար ու խիստ հնազանդ ըլլայ հարկ է որ մինչեւ վերջը այնպէս տեւէ, ասոր վնասը այն տեղն է որ վերջը եթէ իր վարմունքին վրայ զղջալով քիչ մը խստորիկ ուզէ կենալ այսպէս կ'ըսէ (կնկան ձայն հանելով) « փոխուեր է, ալ զիս չի սիրեր։

ՐԱՈՒԼ. Իրա՞ւ է արդեօք։

Տ'ԱՎ. Անհնար է որ այսպէս չի պատահի, բայց եթէ դու այս մասին յաջողեցար, ատոր ըսելիք չունիմ. ուրախակից եմ քեզի սիրելիս, ու շուտով զիս ամուսնուդ ներկայացուր, (դէպ 'ի պատուհանը ձայն մը լսելով) ի՞նչ կեցեր ես, ի՞նչու խնդիրս զքեզ կը շփոթէ, միթէ անկարելի է կնոջդ երեսը տեսնելը, արդեօք տարփանաց յուզմունքը զքեզ նախանձոտ ըրաւ թշուառական, մինչեւ անգամ ինծի դէմ. . .

ՐԱՈՒԼ. (Շփոթելով) Ահ հօրեղբայր իմ . . . չեմ համարձակիր ըսելու թէ ալ դղեակը չեմ բնակիր, այլ այս պատշգամիս մէջ միայնակ։

Տ'ԱՎ. (Զարմացմամբ) Այո, կարելի է, միայն ցորեկները, իբր գրասենեակ։

ՐԱՈՒԼ. Ոչ թէ միայն ցորեկները, այլ նաեւ գիշերներն ալ։

Տ'ԱՎ. Ի՞նչ կըսես։

ՐԱՈՒԼ. Այո, սիրելի հօրեղբայր իմ, դու կը յուսայիր հոս երջանկութիւն գտնել, բայց խաբուեր ես, ինչու որ հիմայ իմ տունս դժոխքին կը նմանի, դժբաղդ եմ։

Տ'ԱՎ. (Րաուլը գրկելէն ետեւ ներեայ դառնալով աթոռի մը վրայ կը նստի) եկու նստէ քովս սիրելիս, ու պատմէ ինծի եղածը, ձեռքէս եկած օգնութիւնը կը ջանամ քեզի ընելու։

ՐԱՈՒԼ. Որովհետեւ կուզես հօր եղբայր իմ, ահա կը պատմեմ գիտես թէ ամուսնանալէս առ-

րի մը առաջ Եւգինէն կը սիրէի ինքն ալ զիս, ու երբ իրեն հետ ամուսնացայ և կրցայ զինքը սիրելի կինս կոչելու, անհուն ուրախութեամբ մը լեցուեցաւ սիրտս, այնպէս թէ կարծէի որ ամեն ազնուութեան և հաւատարմութեան ցոյցերս քիչ էին ինծի մատուցած երջանկութեան փոխարէն:

ՏԵԿ. (շփոթանքը ծածկելով) Առաջին յանցանք:

ՌԱՈՒԼ. Կը սխալիս հօրեղբայր իմ . . . մինչ որ իր բոլոր հաճոյքները կը պաշտէի, իւր կամքերը կատարել՝ ժամ մը չէի զգար, ընդ հակառակը զմայլելի էր իմ վրաս բանեցուցած իշխանութիւնը, կը ջանայի միշտ իրեն հնազանդելու, իւր գերին ըլլալու, բոլոր կեանքս մէջ ծառայաբար անոր քովը ապրելու. վերջապէս վիճակէս խիստ գոհ էի:

ՏԵԿ. Երկրորդ յանցանք:

ՌԱՈՒԼ. Կարելի է, հօրեղբայր իմ. բայց Եւգինէ գեղեցիկ և հրապուրիչ էր. անանկ սիրուն պչրանքներ և անանկ պզտիկ ու անուշիկ կամակորութիւններ ունէր որ . . . խել դու չես գիտեր թէ ի՞նչ է պզտիկ ու աղուորիկ կին մը որնոր մարդուս ուսին կռթնած կէս մը խնդալով, կէս մ'ալ աղաչելով կըսէ. (ձեր կնոջը ձայնը հանելով) թէ որ զիս սիրէք, պարոն, թէ որ զիս սիրէք:

ՏԵԿ. (նոյն ձայնով) յիմար, անմիտ կըլլաք, (բնական ձայնով) երրորդ յանցանք:

ՌԱՈՒԼ. Ո՛հ, կաղաչեմ, ալ մի հարցներ, որովհետև անթիւ են, երկրորդ ամիսը իմացայ որ Եւգինէն, զոր մինչեւ այն ատենը անսխալ կարծած էի (ժպտելով) կինար քանի մը փոքր պակասութիւններ ալ ունենալ:

ՏԵԿ. Հարկաւ, ինչպէս որ կուզես որ չունենար, քանի որ դու իրեն տուած էիր:

ՌԱՈՒԼ. Առաջին անգամ որ իր կամացը հակառակեցայ, քիչ մը առաջ ըսուած խօսքերդ, ոհ այն դառն խօսքերը իւր քաղցր շրթունքներէն թռան ու ականջիս զարկին «Ռաուլ ալ զիս չես սիրեր» ըսաւ, ես, պօռացի մէկէն, լաւ է մեռնիմ քանթէ քու բերնէդ այդ խօսքը լսեմ, հրամայէ Եւգինէ, պատրաստ եմ բոլոր կամքերդ կատարելու:

ՏԵԿ. Վա՜յ թշուառութեան, ամեն բան լմնցաւ, կատարեալ անիշխանութեան ժամանակ:

ՌԱՈՒԼ. Իւր մայրը որ միշտ կը պատուէր իմ վարմունքս, իւր մայրը կըսեմ քանի մը օր մեզի հետ անցնելու եկաւ:

ՏԵԿ. (սարսափած) ձեզի հե՞տ (մէկդի կեցէն):

ՌԱՈՒԼ. Անոր ներկայութենէն անկարելի էր խոյս տալ, աւա՜ղ, կինս ալ խիստ բարեսիրտ ըլլալով ուզեց որ իւր մայրը մեր երջանկութեանը վկայ ըլլայ:

ՏԵԿ. (ծաղրելով) Ձեր երջանկութեանը վկա՞յ, խաղաղութեան կործանմանը շատ աղէկ միջոց մը գտեր էք:

ՌԱՈՒԼ. Անկէ 'ի վեր իրարու խօսք հասկնալու ձար չեղաւ,

ես ալ ակարութեանս վրայ ամըչնալով, միայն գրի որ եթէ առաջին անգամ առիթ մը պատահի կորիզն ըլլամ և իշխանութիւնս ձեռք առնեմ ։

Տ'ԱՎ. Բարի խորհուրդ ։

ՐԱՈՒԼ. Ընդ հակառակը. շատ գէշ, հօրեղբայր իմ. օր մը մօտակայ գիւղակներէն մէկուն մէջ պարահանդէսի մը հրաւիրուած էինք, ուր պիտի գտնուէր նաև Մատամ տը Նանթէօյլ անուն երիտասարդ և գեղեցիկ կին մը, որուն Եուգինէ կը նախանձէր, զօնքանիլիս բարի խորհրդոցը հետևելով. գանէ երեսը նայած ըլլամ. ասոր համար ամուսնոս մերժեց այն հրաւէրը և ինձի ալ արգիլեց որ չերթամ ։

Տ'ԱՎ. Այդ յայտնի էր ։

ՐԱՈՒԼ. Բայց ես չհնազանդեցայ ։

Տ'ԱՎ. (ժպտելով) կեցցես ուրեմն ։

ՐԱՈՒԼ. Սոփիայ յարմար առիթ մը սպասելով բոլ, եթէ երկուքնիս ալ այդ հրաւէրը մերժենք ու չերթանք՝ մեծ անկրթութիւն մը բրած կ՚ըլլանք, ուստի դու գաս չերթաս ես պիտի երթամ ու մինակ պիտի երթամ ։

Տ'ԱՎ. (ձեռք մը հապտպելով) Իրաւ որ եթէ քու տեղդ ես ըլլայի, անկէ աղէկ չէի կրնար պատասխանել ։

ՐԱՈՒԼ. Մարքիզուհին պօռաց թէ բռնաւոր մըն եմ... և թէ կինս ցաւէն պիտի մեռցնեմ ։

Տ'ԱՎ. Ատոնք ամօթական խօսքերն են ։

ՐԱՈՒԼ. (բարկութեամբ) Քաղաքավարութեամբ մը Մարքիզուհւոյն իմացուցի, թէ ինքը մեր գործին չի խառնուիր ։

Տ'ԱՎ. Ես ծեր ազնուականս, ուրիշ կերպով չէի ըներ ։

ՐԱՈՒԼ. Իրիկուն եղածին պէս (ոտքով) հագուեցայ ։

Տ'ԱՎ. Լաւ ։

ՐԱՈՒԼ. Եուգինէ մինչև իրիկուն հետս չի խօսեցաւ, և այս լռութիւնը անհանգստութիւն մը կը պատճառէր ինձ ։

Տ'ԱՎ. (կռնակը դարձնելով) ա՜հ... կամաց կամաց առջի ակարութիւնդ ։

ՐԱՈՒԼ. Ոչ, ոչ, ինչու որ առտուը եկածին պէս պատրաստուեցայ երթալու, այն ատեն Եուգինէն մէկէն պատուհանին առջևը վազեց, բայց գոյն. ու պաղութեամբ մը ըսաւ որ եթէ մէկ քայլ մըն ալ առնելու ըլլամ... ։

Տ'ԱՎ. (խնդալով) Ինքզինքը պատուհանէն վա՞ր պիտի նետէր, գնա բանդ դուն ալ ։

ՐԱՈՒԼ. Այո, հօրեղբայր իմ, այս այնպէս եղաւ, ես իրեն օգնութեան չի հասած (տ'Ավրըքօր շարժմունք մը կընէ) վար նետուեցաւ և առանց երկնաւոր նախախնամութեան օգնութեանը, առանց իրիկուընէ սա պատուհանին տակը մնացած (պատուհանը ցուցնելով) դէզ մը խոտին ...

Տ'ԱՎ. Դէզ մը խո՞տ, դէզ մը խոտ կար հոն, խոտին վրա՞յ ինկաւ ։

ՐԱՈՒԼ. Այո, հօրեղբայր իմ, առանց մէկ կողմը ցաւցնելու, գոհութիւն Աստուծոյ ։

Տ'ԻԿ. [ ]իչ եթէ այնպէս է:

ՐԱՈՒԼ. Բայց հաւատա, որ այն խօսքը ըլլար չըլլար, որոշած էր գահավէժ լինալու:

Տ'ԻԿ. Կարելի է . . . միտքս բան մը եկաւ:

ՐԱՈՒԼ. Ի՞նչ:

Տ'ԻԿ. Բայց կարելի է որ ու-խտիմ՝, խնդիրը անոր վրայ չէ, այլ քու վրադ է, շարունակէ:

ՐԱՈՒԼ. Մարքիզուհին աղջիկը դղեակը տարեր էր. մէկէն հոն վազեցի, բայց աւաղ, դօնքանքս տուաւել եւս կապուած, յայտ-նեց որ իւր բնատանեացը պա-տիւը պահելու համար, եղածը պիտի ծածկէ, սակայն քու տեսքդ կրնայ կենքդ մահ պատճառել, ուստի կարգիլեմ՝ քեզի իրեն երեւնալու, եթէ չես ուզեր երկրորդ անգամ՝ իր մահուանը պատճառ ըլլալ:

Տ'ԻԿ. (Գոչելով) Վերջը:

ՐԱՈՒԼ. Վերջապէս հօրեղբայրս իմ այն օրէնէ 'ի վեր այսինքն ամիս մը կայ որ կնոջս երեսը չեմ՝ տեսած . . . :

Տ'ԻԿ. Ի՞նչ վնաս ունի:

ՐԱՈՒԼ. Ի՞նչպէս, ի՞նչ վնաս ու-նի, քանի որ զինքը տեսնելու փափաքը զիս կը մաշեցնէ:

Տ'ԻԿ. Ուրեմն ի՞նչ կուզես ընել

ՐԱՈՒԼ. Կուզեմ՝ իր ոտքն իյնալ և իրմէ ներումն խնդրել:

Տ'ԻԿ. Երբէք. չըլլայ որ այս-պիսի բան մը ընես. բոլոր յան-ցանքը իրն է, եթէ իրաւցնէ ինքզինքը մեռցնել կուզէր, ու-րեմն չեղին պատճառաւ մը » զինքը պաշտող ամուսնոյն յաւի-տենական ցաւոյ ու տառապա-նաց մէջ թողուլ, աններելի յանցանք մըն է այդ, բայց եթէ ինչպէս որ կը յուսամ՝ կատակ մըն էր բրածնին . . . :

ՐԱՈՒԼ. (Խորհրդածելով) Ի՞նչ. ը-սածներուս վրայ դեռ կը կաս-կածիս:

Տ'ԻԿ. Սիրելիս, իմ տարիքս ե-ղածները միշտ կը կասկածին, մինչդեռ քեզի պէս երիտա-սարդք ամէն բանի կը հաւատան:

## ՏԵՍԻԼ Ե.

Առաջինները և ԱՆՆԱ

ՐԱՈՒԼ. (Շփոթելով ինքնիրեն) Տէր Աստուած, Աննան է:

ԱՆՆԱ. (Վազելով) Ո՜փ . . . չարաչար վազեցի, ներեցէք կը խնդրեմ՝ եթէ քիչ մը ուշացայ, ինչու որ ճամբան հանդիպեցայ . .

ՐԱՈՒԼ. (Լռելու նշան մը ընելով) Ա-ղէկ, աղէկ վերջը տար վրայ կը խօսինք (Տիկ. մը ըսեր 'ի վեր կը նայի)

Տ'ԻԿ. Ահա կուգայ տատուան աղուորիկ աղջիկը: Աննա օրիորդ . .

ԱՆՆԱ. Ի՞նչ պատճառ, Օրիորդ կը կոչէք զիս, գիտցէք որ իմ ա-նունս Տիկին Ռաֆ է, ըսին տա-րի մըն է կարգուելս և այսօր մեր հարսանեաց տարեդարձն է, ու-ստի կուզէինք զայն ազատակիս մէջ տօնախմբել, առանց հը-

հրաւիրած էինք մօտակայ գիւղերէն բոլոր մեր ազգականները, որոնց համար փառաւոր և հարստանեկան սեղան մը պատրաստած էինք ։

ՏԻԿ. Կեցցես, Տիկին Շափ, ես ալ զուարճութեան ցանկացող եմ ։

ԱՆՆԱ. Դուք ալ կեցջիք Պարոն, բայց Ձեր եղբօրորդին Ձեզի պէս չէ. ինչու որ միշտ տխուր է և մարդու մը հետ ալ չի տեսնուիր ուստի արգիլեց մեզ՝ ուտելը, խմելը, երգելը և պարելը, վերջապէս ամենայն ինչ կարգիլէ, հապա սա փառաւոր հաւերը որք իրենց փետուրներովը զարդարուած կ'սպասեն որ մորթենք ու ուտենք. խեղճ կենդանիներ... (հառաչ հոգւոյ) ։

ՏԻԿ. Ի՞նչ Րաուլ, դու այս բարի մարդոց ուրախութեանը արգելք ըլլալ կուզես ։

ՐԱՈՒԼ. Ոչ հօրեղբայր իմ, բայց երբ իրենց աղմուկը, այն երգերը ու պարը լսեմ՝ խիստ անհանգիստ կըլլամ ։ Սա ալ կայ որ Աննան միշտ էրկինը քովն է և անոր շողոքորթական ձեւեր կընէ և անուշիկ աչքեր կը նետէ ։

ԱՆՆԱ. Ի՞նչու չէ. քանի որ մեր խոստովանահայրը հրաման տուած է մեզ ։

ՏԻԿ. (Րաուլին) Իրաւունք ունի, եթէ դու երջանիկ չես, ինչու կուզես որ ուրիշներն ալ քեզի պէս ըլլան, Ամէն բան ինծի ձգէ. Տիկին Շափ. ես կը հաւանեցնեմ՝ եղբօրորդիս ու կը խոստանամ՝ Ձեր Սեղանին ու պարահանդէսին անձամբ ներկայ գտնուելու ։

ԱՆՆԱ. (ուրախութենէն ցատկռտելով) Ա՜հ, ի՞նչ բարի մարդ (փաղաքշելով) ի՞նչ ուրախութիւն և ահա կուգան մեր ազգականները... նամակը դրեակը տարած ատենս ասոնց հանդիպեցայ ։

ՐԱՈՒԼ. (անհամբերութեամբ) ըսէ՛, ըսի քեզի չար ։

ՏԻԿ. (խոժոռները ոտնցնելով) Ի՞նչ, ի՞նչ. եղբօրորդիս նամակ մը, դրեակը, սա ի՞նչ է ։

ԱՆՆԱ. (Րաուլին) ոչինչ տէրը այդչափ նշաններ կընես որ լռեմ, ինչ ըսեմ ուրիշ. ընդհակառակը պէտք է որ ըսեմ. (Ավըրտօրէն) Այո՛, պարոն նամակ մը տարի իւր կնոջը, կեքամօրս ։

ՏԻԿ. (Րաուլին մօտենալով) Իրա՞ւ, կնոջդ նամա՞կ մը գրեցիր ։

ՐԱՈՒԼ. (գլուխը խոնարհելով) Այո՛ հօրեղբայր իմ ։

ՏԻԿ. (բարկութեամբ) և ինչպէս որ ըսիր, իրմէ ներողութիւն խնդրելու համար, թշուառական ։

ԱՆՆԱ. (մինակ) Ի՞նչ կը լսեմ ։

ՐԱՈՒԼ. Ներելի է հօրեղբայր իմ քեզի դիւրին է այդպէս խօսիլը. բայց ես կը սիրեմ անուշիկս. Եւգինէն, գեղեցիկ, երկնատարր և հրապուրիչ է. եթէ չես հաւատար Աննային հարցուր. իրմէ բաժնուելէս 'ի վեր կարծեմ թէ կենսապատիկ կը սիրեմ զինքը, չիտակ այս ամուսնու մը բաժանումը խիստ երկար թուեցաւ ինծ, խաղաղութիւն կը բաղձամ, այո, ինչ գնով ալ ըլլայ

խաղաղութիւն կը պահանջեմ․․ բայց դուն հօրեղբայր իմ չես կրնար գիտնալ թէ ինչ է՞ սէրը ։

Տ'ԵՂ․ Կարելի է, ես, ամուսնութեան կարգերէն չեմ հասկնար․ բայց ապստամբութեան մը, խռովութեան մը ինչ ըլլալը լաւ գիտեմ, քեզի պատմեցի գործառնութիւններուս մէջ պատահածը ։

ՐԵՈՒԼ․ Այո, հօրեղբայր իմ, բայց անիկայ իմ սիրոյս հետ բնաւ յարաբերութիւն չունի ։

Տ'ԵՂ․ Ինչ հակառակը մի և նոյնն է․ ես ալ քեզի չափ կատէի կռիւը, ինչու որ անիկայ կարծանանս պատճառ պիտի ըլլար, բայց եթէ հաւանէի իրենց նոյն խռովութիւնը ամէն օր նորէն պիտի ծագէր, եթէ իրենցմէ ներումին խնդրէի, այսօր ամենքն ալ արհեստս գլուխ կըլլային բայց ՚ի ինծմէ (դարձը-բերան) ահա քեզի բարի օրինակ մը (Աննային) անանէնք ի՞նչ պատասխանեցին ։

ԱՆՆԱ․ Ոչինչ․ կերպարանքը մինակ չէր․ իր միտքը Մարքիզուհին քանի էր․ անիկայ ձեռքէս յափշտակեց նամակը ։

ՐԵՈՒԼ․ (բարկու-թեամբ) Ի՞նչ յանդգնութիւն ։

Տ'ԵՂ․ Կը տեսնե՞ս ։

ԱՆՆԱ․ Բայց, Տիկին, քոյր, այդ նամակը մեր տէրը, պարոնը իր կնոջը խրկեց և ոչ թէ ուրիշին ։

Տ'ԵՂ․ (գաւազանը գետինը զարնելով) Շատ լաւ, Տիկին Շափ ։

ԱՆՆԱ․ Մարքիզուհին, ինծի ականջ չկախելով, նամակը բացաւ իր մէջ ոտք ու հինգ մատ բարձրութեամբ նայուածքներէն մէկը իմ վրաս դարձնելով, վերջը նամակը մէկ անգամ աչքէ անցընելէ ետև, ուսերը թօթվեց . . . ու կերպով . . . ու ծաղրածութեամբ խնդաց․ (ցած ձայնով) անանկ որ եթէ ես համարձակէի Պ․ Շափին առջև այնպէս խօսդալ․ լուռ որ նշանները երկուքն ալ ատեն վրաս կ՚երևնային (հառաչելով-բերանը) ինչու որ շատ ուժով է Պ․ Շափ․․ անանկ ուժ մը ունի ս․ ․ ․ ը ։

ՐԵՈՒԼ․ (անհամբերութեամբ) վերջը ։

ԱՆՆԱ․ Վերջը, կեսուրը, անտակ մը գրասեղանի առջև նստաւ, քառակուսի թղթի մը վրայ բան մը գրեց, ծրարեց, ու ինծի տուաւ, ձեռքէն առած ատեն վսեմութեամբ մը բսաւ „սա, անիկայ իմ վերջնագիրս է” ես ալ․ վերջնագիր, անիկայ երևելի բան մը ըլլալու է քաղ ու գրպանս դրի, ահա (նամակը բառլէն հանելով) ։

Տ'ԵՂ․ Չառնե՞մ, ի՛նչ, իրեն գրոյն առջևն անգամ կը դողամ ։

ՐԵՈՒԼ․ (ակամայ) Ոչ․ բայց ինծի կերևայ թէ այս նամակը իմ վճիռս կը պարունակէ ։

Տ'ԵՂ․ (նամակը առնելով) Ուրեմն կը նետես, որ Մարքիզուհւոյն գրութեան ոճը հասկնամ մէյ մը տեսնենք թէ ի՞նչ է Տ․ Շափին անոր վերջնագիրը կոչածը ։

ԱՆՆԱ․ (խնդալով) Բանէ մը չի վախնար եղեր այս ծերը․

Տ'ԵՂ․ (նամակը բանալով) Օ․ ․ ․

Անտան իրաւունք ունի եղեր (կը կարդայ) «Աւելցայ մէջ վերջնագիրն է» (կամկ կամէ) «աղջիկս քեզ միայն մէկ պայմանաւ մը ընդունելու կը հաւանի, այն է որ յանցանքներդ ճանչնալով, դըրեակը գաս և ինծմէ ու կնոջմէդ ներումն խնդրես . . . .

ՌՕԶԻ. (Բարկութեամբ) Ես ներումն խնդրեմ։

ԱՆՆԱ. (Նոյնպէս) Երկիւ մը խոր կնոջմէն ներումն խնդրէ։

Տ'ԱՎ. (Ծաղրելով) «Այս պայմանաւ միայն կրնամք քեզի ներել» Մար. Աթենաս ալ Լեապատ։

ԱՆՆԱ. (Բարկութեամբ) Բայց այս անտանելի է։

ՌՕԶԻ. (Նամակը կամէն ու կը կարդայ) Ո՛չ, ոչ, աչքերս կը խաբեն զիս, չեմ կրնար հաւատալ այս գրութեանը։

Տ'ԱՎ. (Ծաղրելով որ կը կարդայ) Արդ մայրիկէ անգթութեանդ արգիւնքը. կը տեսնես թէ ինչ վաստըկիր ես այնչափ խոնարհելով։

ԱՆՆԱ. (Արտօրով) Իրաւ է . . .

Տ'ԱՎ. Որչափ զիջանիս, այնչափ աւելի պահանջմունքները կը սաստկանան։

ԱՆՆԱ. (Ամէկ արտօրով) Իրաւունք ունիք։

Տ'ԱՎ. Շատ յայտնի է որ տան մը մէջ այրը միայն կրնայ հրամայել։

ԱՆՆԱ. (Խիստ արտօրով) Շատ լաւ։

Տ'ԱՎ. Ինչ աղէկ է որ ամէնքն ալ իրեն հնազանդին։

ԱՆՆԱ. (Տարօրէկ) Ծերը իրաւունք ունի, (Տ'Ալժեարին) ներեցէք յանդգնութեանս արդեն

(Ռօզը կը հեռանայ ու գալարուելով աթոռի մը կը նստի)։

Տ'ԱՎ. (Ինքնիրեն) Ի՞նչ կըսես, իրաւունք չունիմ։

ԱՆՆԱ. (Ձախ որ Ռօզ նստած մէջ նամակին վրայ կը նայի) Անշուշտ իրաւունք ունիք, ես ալ այրերը զօրաւոր ձեռնալու ու գերացին երևնալու համար ամէն ճիգերս 'ի գործ կը դնէի. Պ. Շուի ալ այնչափ կը սիրէի զիս որ կարծէի թէ ամէն փափաքներս ալնի կատարէ. հըն գատր մտրդը անփոյթ ընդհակառակը իմ վարմունքս տեսնելով օր մը կանչեց ու ըսաւ «Աննա, ապարանիս մէջ ամէնայն ոք պարտաւոր է քեզի հնազանդելու, ինչու որ տիրուհին ես, իսկ դու պարտաւոր ես ինծի հնազանդիս, որովհետև ես միայն եմ տէրը» յիրաւի տէրը ամենէն ուժով կ՚ըլլայ» (հառաչելով) Պ. Շուին ալ խիստ ուժով է գիտցած ըլլալ, անոր վըրայ ես ալ գլուխս ծռեցի ու կը հնազանդիմ լռի, անկէ 'ի վեր տասնսօն ըլլալուն պէս ամէն մէկս գործերնուս կը նայինք, կ՚ըցեն տէրն ու աշխատանք, չերեւին երբեք վիճան ու տասնապանք, օրէ օր աւ աւելի կը սիրենք զիրար։ Ցօնի օրերը, նախ զարդարուն հագուստներնիս կը հագնինք ու կը ջանանք գեղեցիկ երևնալու, վերջը կերզենք ու կը պարենք. կիւրակէ օրերը այլ և այլ զբօսանքներով կը զուարճանանք, բայց միայն միշտ արերը իրարու հետ երջանկութեամբ կ՚անցնինք։

ԲՍՈՒԿ. (Մեղմանալով) Խըրատ կուտայ։

ԱՆՆԱ. Ճ խտակը Պ. Շահին ալ շատ բարի մարդ է, միշտ ուրախ և գործքին մէջ ալ արթուն է, կենդանի ու ազատակէն զատ ուրիշ բանի չի մտածեր. իւր սիրելիներն են Աննան ու Լուսինէի գարեջուրը (յայնը ցուցնելով) բայց իւր հրամանները կըկենելու չեգար. ասոր համար է որ ագարակին մէջ ամէն մարդ զինքը կը յարգէ ու կը մեծարէ։

ԲՍՈՒԿ. (այս վերջին խօսքերուն նախ ճակը ցուցնէն կը թողու) Ո՞վ երկինք։

Տ'ԱՎ. Կեցցես Տ. Շահի. կը տեսնեմ որ ժամ մը բարոյական մը ու խելացի գլուխ մը ունիս, եկու պապատուելինք։

ԱՆՆԱ. (ընդհատելով կողովը) Բայց տէրը Պ. Շահի ի՞նչ կըսէ։

Տ'ԱՎ. Նախ քիչը հաս չէ, երկրորդ իմ առաջարկութիւնս իրեն համար անմիտս է։

ԱՆՆԱ. (ծակ... ) Ի՞նչ ազէկ մարդ է եղեր այս ծերը։

Տ'ԱՎ. (Բառոյլ ցուցնելով) Ուրեմն եթէ, անգործ թողած իրաւունքներդ քիչ մը ատեն ինծի կը յանձնես և եթէ կատարեալ վստահութիւն ունիս իմ վրաս, կը խոստանամ քեզի որ քիչ ատենէն քու մեծակից ալ Պ. և Տ. Շահին յար և նման կըլլամ։

ԱՆՆԱ. (շնորհակալութեան ցես մը ընելով) Տէր Աստուած, ի՞նչ մեծ պատիւ է այս մեզի համար։

ԲՍՈՒԿ. (պահելով) Բոլոր կամացը կը հետեւիմ հօրեղբայր իմ, միայն թէ իմ սիրելի Լուսինէս ինծի դարձնես։

Տ'ԱՎ. Այո, պիտի տեսնես Լուսինէն, բայց ոչ առջի պէս, այլ քաղցր, ազնիւ, միանգամայն քեզի հնազանդ (Բառուլ չի հաւատալը ցես մը կ'ընէ) խոլ դու Աննա..

ԱՆՆԱ. Իմ պաշտօնս ի՞նչ է պարոն։

Տ'ԱՎ. Գինի հաներդ մերթէ ու պատրաստէ։

ԱՆՆԱ. Ասկէ դիւրին բան չկայ։

Տ'ԱՎ. Պատրաստէ նաև, սեղանը ու պարահանդէսը, նուագածուները ինծի թող, ես կը հրաւիրեմ զանոնք։

ԱՆՆԱ. (դէպ ի ագարակը երթալով) Երթամ ու տղոցս ալ մէյ մը աչքէ անցնեմ։

Տ'ԱՎ. (խորհելով) Տղո՞քդ . . . ինչ կըսես . տարուան մը մէջ . . .

ԱՆՆԱ. Երկու հատը մէկանգ, պարոն, իրենց հօրը պէս ուժով երկու հատ։

Տ'ԱՎ. (զարմացմամբ) Երկու հա՞տ։

ԱՆՆԱ. Այո, պարոն, ինչու որ Պ. Շահի ատեն կորսնցնել չսիրեր։

Տ'ԱՎ. Աննա, քաւ Պ. Շահին որ առանց զինքը ձանձրալու պատիւն ունենալուս իմ անկեղծ յարգանքներս կը մատուցանեմ իրեն։

ԱՆՆԱ. (շնորհակալութեան ցես մը ընելով) Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն. պարոն։

Տ'ԱՎ. Ասէ իրեն թէ կը բաղձամ անձամբ զինքը շնորհաւորելու, կը բաղձամ նաև Աննային կենացը իրեն հետ գաւաթ մը Լուսինէի գարեջուրէն նետելու։

ԱՆՆԱ. Շատ աղէկ վստահ ե-

զէք որ պզտրան Հօփ տասնկ զու-
արճալի օր մը ուրախ սրտիւ կը
հաճի իր փափկացեալ բաժակին
զձեզ մասնակից ընելու ։

ՏԱՎՐԻԹԻՐ

«Բաժ իրեն և մի մոռնար»
«Որ կը բաղձամ ձեռքը սխմել»
«Եւ Անուշին կենաց համար»
«Իւր հետ գինույ չէշ մը պարպել» ։

ԱՆՆԱ

Հաս լաւ, գինոյս ըլլաս տէր իմ
Որ Գ. Հօփ խիստ կը հաճի
Երբ մէկ ընկեր հաւատարիմ
Գինույ խնդիկ իւր հետն ունի ։

Ուստի կերթամ իրեն կիմա-
ցընեմ որ կը բաղձաք զինքը տե-
ձամք տեսնելու և իմ կենացս
իրեն հետ գաւաթ պարպելու ։

ՏԱՎ. Գնամ և շուտ (Աննա ձախակողմէն դուրս կ'ելնէ) ։

## ՏԵՍԻԼ Զ.

### ՐԱՖԻԼ, ՏԱՎՐԻԹԻՐ.

ՏԱՎ. Դանք հիմա մեր գործին, ինչ ըրիր նայինք ամիսէ մը 'ի վեր ։

ՐԱՖԻԼ. Այս պատշգամիս մէջ միայնակ մինչեւ ցարդ ներզութեամբ ու ձանձրութեամբ անցուցի, մտածելով դղեակներէն ելած բոլոր հրաւէրները մերժելով, զեռ այս առտուօն որուն երթալու հրաւէր մ'ալ ։

ՏԱՎ. Ինչու համար ։

ՐԱՖԻԼ. Որովհետեւ Տ. Նանթէօյլին տունը միակ ըլլար, այս ան երիտասարդ կինն է որուն Եւգինէ կը նախանձէր, մերժեցի այս հրաւէրը փախնալով որ չըլլայ թէ զօնքանցիս մտքին մէջ նոր և անհիմն կասկածներ առթեցնեմ ։

ՏԱՎ. Քեզի ինչ. պէտք է երթալ ։

ՐԱՖԻԼ. Բայց հօրեղբայր իմ, պիտի ներկանամ հոն ։

ՏԱՎ. Հոգ չէ, ինչ. քեզ մը տաւջ ինծի հնազանդելու բուած խոստմունքդ արդէն ետ կառնես ։

ՐԱՖԻԼ. Ուրեմն կը հնազանդիմ, հօրեղբայր իմ ։

ՏԱՎ. Ուստի կուզեմ որ ճամբայ ելլելէդ առաջ պարտէզին մէջ քիչ մը պտըտիս ու զբօնուս ։

ՐԱՖԻԼ. Բայց հոն, հարսնեկան սեղան մը կայ պատրաստուած, հրաւիրեալներ կան ։

ՏԱՎ. Ճիշդ անոր համար է որ ես ալ քեզի այս առաջարկութիւնը կընեմ ։

ՐԱՖԻԼ. Հոն աղուորիկ աղջիկներ պիտի տեսնեմ ու . . . . .

ՏԱՎ. Ըսելի աղէկ ։

ՐԱՖԻԼ. Թէ որ զօնքանցս ըսէ, ինչ կըսէ ։

ՏԱՎ. Քեզի շատ որ պէտք է վստահութիւն ունենաս իմ վրաս, ես բոլոր պատասխանատուութիւնը իմ վրաս կառնեմ ։

ՐԱՖԻԼ. (ձայնը փոխելով) Յիրաւ է

հօրեղբայր իմ, ըսիս գիտէ սիրով հանես ։

Տ'ԱՎ. (ապարանքին մէջ նայելով) Ի՞նչ երջանկութիւն, տես, ահա կը պատրաստուին նուագածուները.

ՐԱՈՒԼ. (փափկալով) Ստոյգ է, ես բոլոր կեանքս մէջ Մարքիզուհւոյն գերին չեմ կրնար ըլլալ ։

Տ'ԱՎ. Ինչու չէ, քանի որ դուն անոր երիկը չե՞ս ։

ՐԱՈՒԼ. Իսկ վերջապէս մարդու մէջ մնալը, քիչ մը զուարճանալը, երեւակայածիս չափ մեղադրելի բան մը չէ ։

Տ'ԱՎ. Ճարկա ։

ՐԱՈՒԼ. Ուրեմն հօրեղբայր իմ, բայց կամաց կը հնազանդիմ ։

Տ'ԱՎ. Յուսամ որ դուն սիրով ըլլաս վերջը ։

ՐԱՈՒԼ. Ես հիմայ ալ արդէն կ'երթամ, կը տեսնես թէ ինչպէս սիրով զուարճանամ՝ շատ մը խենդութիւններ սիրով ընեմ, անկէ որսի սիրով երթամ, հոն ալ թէ որ կարենամ, շատ մը գինի կը նետեմ ։

Տ'ԱՎ. Սիրելիս, սիրով կարենաս (Րաուլ ապարանքը կը մտնէ) ։

---

## ՏԵՍԻԼ Է.

ՏԱՎՐԲՈՒՐ՝ վերջը ՄԱՐՔԻԶՈՒՀԻՆ ու ԵՒԳԻՆԷ

Տ'ԱՎ. (մինակ) Վերջապէս բաւական դժուարութեամբ կրցայ զինքը զուարճութեանց մէջ մղել, հիմայ երթամ դղեակը, մարքիզուհին տեսնեմ. խիստ ուրախ եմ որ ինծի արժանի հակառակորդի մը հետ է գործս. բայց ահա ինքը, կարծես թէ թշնամին մարգարէացաւ որ հոս եմ (մէկ ձախ կողմը նայելով) նոյն ինքն է, առջի գեղեցկութիւնը չէ մնացեր. բայց հպարտութիւնը իւր դէմքին վրայ յայտ յանդիման կ'երեւայ (հասարակօրէն) գեղեցկութիւնը կանցնի, բայց բնութիւնը յաւիտեան կը մնայ ։ Արդեօք իրեն հետ եկող օրիորդը ով է, անշուշտ Եւգինէն ըլլալու է, հրեշտակային ալ դէմք մը ունի, ուր էր թէ բնութիւնն ալ նոյնպէս ըլլար (առաջ գալով) հիմայ կիմանամ Րաուլին յուսահատութեանը պատճառը. արդարեւ զոհ մը բաւական ծանր է եղեր. (Մարքիզուհին յափ կողմէն ներս կը մտնէ Եւգինէին հետ, ծառայ մը յետոյ գիրք մը բռնած ետեւնուն կու գայ) «տիկին մարքիզուհի» (Տավրպուր գլխարկը կը հանէ)

ՄԱՐՔ. Պարոն Մարքիզ տ'Ավրբուր....

Տ'ԱՎ. (բարեւելով) Ինչ երջանիկ դիպուած ։

ՄԱՐՔ. Պիտի ըսէի եկեղեցին երթալու համար ելանք տունէն... (Յետոյ սպասաւորին նշան մը կ'ընէ որ դուրս ելլէ) կը ներկայացնեմ ձեզի Պարոն, Եւգինէ աղջիկս ։

Տ'ԱՎ. Իմ ամենուն հարսս..

ՄԱՐՔ. Կը յուսանք Պարոն որ

զձեզ զգեանք հաւընկալելու-
պատիւը պիտի ունենանք ուր
եթէ բարեհաճիք անձամբ մը
ընդունելու ։

Տ'ԱԳ.՞ Ես ալ շատ կը բաղձայի
բայց անկարելի է, պէտք է մա-
նաւանդ ըլլամ աղէտախնացս թըշ-
ուառութեանցը․ եղբօրորդւոյս
Բաւլին ապսպրանքը պիտի ըն-
կերակցեմ, որ քիչ մը առաջ տե-
սայ ու գրեցի ։

ԵՒԳ. (Բարկութիւնը զսպելով)
Տեսա՞ք զինքը այսօր ։

ՄԱՐԹ. (Բարկութեամբ) և բաւա-
ձեցի որ ․ ․ ․ ․

Տ'ԱԳ. Այո, Տիկին, ամէն բան
տեղն 'ի տեղւոյ յայտնեց ինձ․
Ձեր վերջնագրին անգամ կա-
ցայի ։

ՄԱՐԹ. (Հեգնութեամբ) յանցա-
ւոր է Բաւլ ։

ԵՒԳ. (Հառաչելով) Այո, մեծ
յանցանքներ ունի ։

Տ'ԱԳ. ([illegible]) Այո, այս
խիստ շատ յանցաւոր է ։

ՄԱՐԹ. Բայց վերջապէս, որով-
հետև ներումն կը խնդրէ ։

Տ'ԱԳ. (Կեղծելով) չէ Տիկին,
անարժան է Բաւլ ձեր ներո-
ղամտութեանը․ ես ինքնին իրեն
ըսի թէ արժանի չէ ձեր գը-
թութեանը, վասնորոյ չի հա-
մարձակիր ձեզմէ ներումն խընդ-
րելու ։

ԵՒԳ. (Փափկանալով) Ի՞նչ ըսել
կուզէք Պարոն ։

Տ'ԱԳ. Այո, Տիկին յաւիտեան
կը մերժէ ։

ՄԱՐԹ. Բայց եթէ մեր վերջնա-
գիրը ընդունի ․ ․ ․

ԵՒԳ. (Մօտենալով) Այո, եթէ
բարեհաճիք իրեն ․ ․ ․ ։

Տ'ԱԳ. (Մեղմ կեղծելով) Ո՛չ Մար-
քիզուհի, ոչ տիկին, դուք շատ
բարեսրտութեամբ վարուեցաք ի-
րեն հետ, կին ըլլալնիդ միշտ
ներողամիտ կըլլաք բայց մեր յան-
ցանքը խիստ մեծ է, պէտք է որ
պատժուինք, պէտք է ապաշխա-
րենք ։

ԵՒԳ. Բայց սակայն, հօրեղ-
բայր խմ․ ամիսէ մը 'ի վեր կա-
պաշխարէ ։

Տ'ԱԳ. Մէկ ամսուան ի՞նչ կըլլայ ։

ԵՒԳ. (Անհամբերութեամբ) Ի՞նչ-
պէս, մէկ ամիսը շատ երկայն
ժամանակ է ։

ՄԱՐԹ. (Ցած ձայնով աղջկան) Լաւ է ։

Տ'ԱԳ. (Առանձին) Ամէն բան
յայտնուեցաւ երկուքը համա-
միտ չեն ապաշխարանքին տևո-
ղութեանը․ (Բարձր) Ստուգիւ
տիկնայք, եթէ եղբօրորդիս
բոլոր կեանքը մէջ ապաշխարէ,
չի բաւեր ։

ԵՒԳ. Ինչպէ՞ս․ (Ձեռքն ելնելով)
Տէ՜ր Աստուած այս ի՞նչ ձայն է
որ կըլսեմ ։

ՄԱՐԹ. Ուսկի՞ց կու գայ այս ձայնը

Տ'ԱԳ. (Անտարբերութեամբ) ոչինչ,
Տիկնայք, ոչինչ, կարծեմ Բաւլին
ձայնն է, որն որ Նանթէօլ գըղ-
եակին մէջ ունեցած բարեկա-
մացը հետ որսի պիտի երթայ ։

ԵՒԳ. (Բարկութեամբ) անկարելի
է որ յանդգնի, ապա թէ ոչ ․ ․ ․ ։

Տ'ԱԳ. Ձին պատրաստ է ար-
դէն, ինքն ալ կ'աճապարէ որ-
սորդաց հասնելու (Հառաչելով)
Ի՞նչ ընէ խեղճը, ուր որ ալ ըլ-



2484-17

լայ, կերպով մը իր սրտմտութիւնը սփոփելու կը ջանայ ։ (Նուագածուները պար մը կը չալեն) ։

ԱՆՆԱ. (ագարակին մէջէն) Ամէն մարդ իր տեղը Պ. Շափ դէմն անցեր ։

ՌՕԶԻԼ. (նոյնպէս) Ձեռք տուէք Տիկնանց ։

Տ'ԱԼ. (անտարբեր) Բան մը չէ Տիկնայք. այսօր Տիկին Շափին հարսանեաց տարեդարձը ըլլալուն, զայն կը տօնախմբեն ։

ԵՒԳ. Իմ Աննիս ։

Տ'ԱԼ. Այո, Բաուլին ալ պատրաստուած է՝ հարսին հետ պարելու ։

ԵՒԳ. (աջ կողմը նայելով եւ զայրացմամբ) Ի՞նքը, ի՞նչ կը յանդգնի՝ նի խաղալո՞ւ, պարելո՞ւ ։

Տ'ԱԼ. Ի՞նչ մը սխալ բացուելու համար ։

ԵՒԳ. (զայրացմամբ) Ի՞նքը զուարճանալու յանդգնի ։

ՄԱՐԳ. (հեգնութեամբ) Մանաւանդ, գիւղացիներուն հետ ինչ ամօթ ։

ՌՕԶԻԼ. (ներսէն) Պ. և Տ. Շափին կենացը ։

Տ'ԱԼ. (աջ կողմը նայելով) Կը լսէ՞ք իր ձայնը ։

ՌՕԶԻԼ. (նոյնպէս) Բարի ամուսներուն կենացը (շատ մը ձայներ) կեցցէ Պ. Բաուլ ։

Տ'ԱԼ. (աջ կողմը նայելով) Ես ասկից կը տեսնեմ զինքը, ու բարի գիւղացւոց մէջ ։

ԵՒԳ. (նայելով) Կը սխալիմ, արդեօք, չէ, չէ, ինքն է, Տէր Աստուած Աննան կը գրկէ, ո՜հ (դէպ՝ի ագարակը քանի մը քայլ կառնու) ։

ՄԱՐԳ. (չթողլով) Ի՞նչ կընես, աղջիկս ։

ԵՒԳ. (վերջին աստիճան զայրացած) Երթամ զինքը խայտառակեմ ։

ՄԱՐԳ. (ցած ձայնով եւ բարկութենէն դողալով) Հապա քու ազնուականութիւնդ ո՞ւր կը մնայ. անս, ես ալ քեզի չափ բարկացած եմ, բայց ազնուական մը պէտք է կըրցածին չափ իր բարկութիւնը ծածկէ. (բարձրաձայն) Եկո՛ւ, երթանք աղջիկս. իր կնոջը դէմ ատանկ անտեղութիւն մը սոսկալի է, բայց հոս մի ըներ, մենք իր անզգամութիւնը կարող ենք պատժելու ։

Տ'ԱԼ. (առանձին) Ցաւալի շատ աղէկ եղաւ այս, արդէն սրտերնին կատաղութեամբ լեցուած է, կերպով մը կամ կը մեռնինք և կամ կը յաղթենք ։

ԵՒԳ. (մօրը բարեխօսմամբ) Հիմա ալ ամէն բաներուդ կը հաւանիմ մայր իմ ։

Տ'ԱԼ. Համբերեցէք կը խնդրեմ, ձեր ընելիքը ինծի ալ յայտնելու ։

ՄԱՐԳ. (հեգնութեամբ) Ձեզի հաշիւ տալու պարտաւոր չեմ պարոն, բայց այս երեկոյս ամէնքնիս կը մեկնինք. (Եւգինէն ու Մարգըրիտ կ'երթան, տ'Ալբերթ ալ հեռուէն զինքն կը բարեւէ) ։

## ՏԵՍԻԼ Ը.

Տ'ԱԼՖՕՐ (գլխարկը գլուխը դնելով).

Ի՞նչ պիտի ընէ արդեօք, կը տարակուսիմ. բայց միշտ մեծ հարուածի մը պէտք է սպասել, քանզի որ ինքը մեզի դէմ դնելու կարող կին մըն է, բարեբաղդաբար Եւգինէին բարկութիւնը սիրոյ հետ խառնուած է, իսկ Մարքիզուհւոյն կատաղութիւնը աւելի բան չէ այլ միայն խեղճերը կռուի և անմիաբանութեան դրդուելու փափաք մը։ Ա՛հ կոխ, պատերազմ կուզես զաւն պատրաստ ենք պատերազմի խաղաղութիւն ձեռք բերելու համար, և որովհետև ինքը իր վերջնագիրը խրկեց, ես ալ իմինս չենեմ. որուն անշուշտ իրեն դըրածէն վար չի մնար։ (տ'Ալֆօր կ'երթայ աթոռէ մը վրայ կը նստի. գըրպանէն պահարան մը կը հանէ. և անոր մէջէն կտոր մը թուղթ պատռելով կապար գրչով կսկսի գրել. այն միջոցին նուագածուները առջի խաղած պարը նորէն կսկսին խաղալ)։

## ՏԵՍԻԼ Թ.

ՌԱՈՒԼ (տպարանէն կ'ելլէ. տ'Ալֆօր միշտ նստած կը գրէ).

ՌԱՈՒԼ. (խիստ ուրախ) Ա՛հ, աի՞նչ ուրախալից ու զուարթ բան է երկիր գիւղական զբօսանքը, Պէտրար ըսաւ որ ձիս պատրաստ է, ու ասի շուտով Ճամբայ կելլեմ, սպառդայ հասնելու համար, ու բոլոր բանծներդ իրաւէն եղեր հօրեղբայր իմ, այս բարեսիրտ գիւղացւոյ ուրախութիւնը զիս զմայլեցուց, եւ անդամ մը սիրով իմ կենացս ալ խմեցին ատ պարզելի գարեջուրէն (բիրայով) որ թէպէտ և՞ անտանելի համ մը ունի, բայց և այնպէս շամբանեայի գինւոյ պէս կը փրփրի ու կը տաքցնէ մարդուս գլուխը։ Անկէ զատ Տ. Շոփը ու միւս ցանկառող աղջիկները ինչ ազնիւ ընութեան տէր են եղեր, յիրաւի խօսուածք և սիրունիկ հանդէս, և անձնուն հետ ալ պարեցի, և բոլոր այն աղուորիկ աղջիկներն ալ ինծմէ անուշիկ պաչիկներ առին, որովհետև ես, զօհրանչիս պէս հպարտ չեմ, վերջապէս շատ մը խենդ ու խելառ բաներ ըրի, միայն կը ցաւիմ որ կեսուրըս զիս չի տեսաւ։

Տ'Ա. (Գիրը լմնցնելով) Ի՞նչ կըսես։

ՌԱՈՒԼ. (ինքնիրեն) Հայրս ասկէ կուտայի, եթէ այն միջոցին հոն գտնուէր։

Տ'Ա. (ինքնիրեն) Այդ փափաքըդ այդչափ աւելի չի նստաքեղ։

ՌԱՈՒԼ. (տարակուսած կայնելով) Ի՞նչ, ինչ ըսիր։

Տ'Ա. Ինչ մը առաջ ինքը հոս էր։

ՌԱՈՒԼ. Մարքիզուհի՞ն։

ՏԷՐ. [illegible] հետ :

ԾԱՌ. Ա՛լ այս չիկայ, կորսընցայ :

ՏԷՐ. Ընդհակառակը կատղած դուրս ելած ատեն, որն որ մեր ուզած բանն է, եւ ալ այս առաջին յաջողութիւնքը շքեղ յաղթանակի մը պատկերը համար նամակ կը գրէի . . . . :

ԾԱՌ. Ի՞նչ, ի՞նչ կը գրէիր հօրեղբայր իմ.

ՏԷՐ. Մեր վերջնոգլուխը, ամէն մարդ պէտք է կրնայ ունենալ, եւ միւս եկածը գրեցի, թէ որ պակաս բան մը կայ ուրեմն ուսապարտէ, ( [illegible] ) :

ԾԱՌ. Այս, այս թուղթը առաքեցի՞մ, ով երբէք հօրեղբայր իմ, մի յուսար զայս ինծմէ :

ՏԷՐ. Բայց այս հարկը այսպէս կը պահանջէ :

ԾԱՌ. Ոչ երբէք բախտեցի, կուզես ուրեմն որ զիս բոլորովին ատէ, կուզես զինքը յաւիտեան բաժնել ինծմէ :

ՏԷՐ. ( [illegible] ) . Հեռացնե՞լ զինքը քեզնէ, ոչ ուրեմն, կը ճանչնաս ան կինը որ Տ. Շախին հետ կը խօսակցի :

ԾԱՌ. Ինքն է, այն ինքը . ( [illegible] ) :

ՏԷՐ. Ինքը հոս կուգայ, դուն ո՛ւր կերթաս :

ԾԱՌ. Երթամ իրեն խնդրեմ թէ քիչ մը առաջ ատամնները կամայս հակառակ էին :

ՏԷՐ. Ոչ երբէք, վերջը ամէն բան կը կորսուի . արտադրները քեզ կապանէն, շուտ ըրէ :

ԾԱՌ. Դժոխքը այն որմին գլուխը փարատի, չի պիտի երթամ :

ՏԷՐ. Մինթէ չես յիշեր ինծի ըրած խոստումդ . գիտե՞ս թէ ինծի տրուած խոստում մը անկարելի է դրժել :

ԾԱՌ. Երբէ հօրեղբայր իմ, բայց անկարելի է ինձ հեռանալ ատկէ, քանի որ ինծմէ քանի մը քայլ միայն հեռու է .

ՏԷՐ. Կը հաւանիմ, միայն թէ հետը չի խօսիս :

ԾԱՌ. Կերդնում լռել իր դիմացը :

ՏԷՐ. Ուրեմն մնիր սա պատշգամին մէջ, ու անկէ դուրս չպիտի ելլես առանց իմ հրամաննիս . . . :

ԾԱՌ. Բայց հօր եղբայր իմ . . :

ՏԷՐ. Ըսա թէ ոչ քեզմէ կը բաժնուիմ կերթամ . չէ, չէ, աղէկ միւս եկու գքեզ զօնքանչիղ կը մատնեմ :

ԾԱՌ. Ո՛հ, չէ . չէ, հօր եղբայր իմ, այդ խօսքը զիս կը պարտաւորէ քեզի հնազանդելու :

ՏԷՐ. ( [illegible] ) Մնիր ուրեմն սա պատշգամին մէջ եւ ուրիշ բան չեմ պահանջեր քեզմէ :

ԾԱՌ. Կը հնազանդիմ քեզի ( [illegible] ) բայց ատկից առաջ ըլլալ անկարելի է :

ՏԷՐ. Ահա՛ ներս մտիր վերջը կը խօսինք առտու . ( [illegible] ) քալէ ( [illegible] ) ճիշդ ատենն է եղեր ( [illegible] ) :

## ՏԵՍԻԼ Ժ.

ԵՒԳԻՆԷ · ԱՆՆԱ · վերջը ՏԱՐՓՈՒՐ ·

ԵՒԳ. (գալով Աննային հետ բարկութեամբ խօսելով) կը հարցնեմ քեզ թէ ինչու համար իրեն հետ պարեցիր։

ԱՆՆԱ. Բայց կնքամայր իմ, Պ. Բաւլը զիս հրաւիրեց պարելու, անիկայ ինծի մեծ պատիւ մըն էր, որ . . .։

ԵՒԳ. Օր պէտք էիր մերժել։

ԱՆՆԱ. Նախ ես մերժեցի, բայց անմիջապէս Պ. Շախ հրամայեց որ ընդունիմ։

ԵՒԳ. Բայց ի՛նչ յանդգնութիւն, թողուլ որ դքեզ գրկէ։

ԱՆՆԱ. Ես ի՛նչ ընեմ, Պ. Շախը ըսաւ որ . . .։

ԵՒԳ. Գ՛նա բանդ դու ալ, Պ. Շախովդ, թող ըսէիր որ չես ուզեր, ատկէ դիւրին բա՞ն կայ։

ԱՆՆԱ. Չէ, այդ չըլլար, մեր երկրին օրէնքը այդպէս չէ, վերջը Պ. Շախ, կը սրդողի։

ԵՒԳ. Ի՜նչ մեծ դժբաղդութիւն . . .։

ԱՆՆԱ. Հարկաւ ինչու որ եթէ սրդողի . . . . ։

ԵՒԳ. Ի՞նչ կ՚ըլլայ։

ԱՆՆԱ. Եթէ սրդողի, ես պէտք է իր տեղը երթամ, ու իրմէ ներում խնդրեմ, որն որ միշտ անախորժ բան է։

ԵՒԳ. Ա՛հ, ամէն ատեն դու իր տեղը կերթաս, բայց եթէ չհաճի՞ս։

ԱՆՆԱ. Ան ատենը ամէն բան կը լմննայ։

ԵՒԳ. Ամէն բան։

ԱՆՆԱ. Այս կնքամայր իմ, ամէն բան կը լմննայ, ու ես դժբաղդ կըլլամ։

ԵՒԳ. Կը կարծե՞ս։

ԱՆՆԱ. Հարկաւ, քեզի համար ալ այնպէս չէ՞։

ԵՒԳ. Ո՛հ ես . . . (Տ'Անվերսը դուռը կը բանայ և ներս կը գայ, Եւգինէ զինքը կը տեսնայ) երկինք, հօրեղբայրս է։

Տ'ԱՆ. (մօտենալով) Ազնիւ հարսնուս, ո՞ւր է մայրդ, Մարքիզուհին (Աննա ագարակը կը մտնէ)։

ԵՒԳ. Քիչ մը առաջ ատկէ կէս մղոն հեռու քաղաքը գնաց, հարկաւոր նիւթի մը վրայ փաստաբանի մը հետ խօսակցելու համար, ճար չկար որ ես ալ հետը երթայի։

Տ'ԱՆ. Իրաւունք ունիք . . .։

ԵՒԳ. (չորս կողմը կը նայի, կարծես մէկը փնտռելու համար). Ես ալ ապարանքին մէջէն դղեակը պիտի երթայի։

Տ'ԱՆ. Բայց ի՛նչ կը խնդրէք ըսէք կ՚աղաչեմ . . .։

ԵՒԳ. Ոչինչ. կը փախնայի որ չըլլայ թէ անծանօթի հանդիպիմ։

Տ'ԱՆ. Հանդարտեցէք ուրեմն, ինքը գնաց։

ԵՒԳ. Գնաց կըսէք, ուրեմն կը կենամ, սիրելի հօր եղբայր իմ (այլայլութեամբ և զայրոյթով) անշուշտ որսի գացած ըլլալու է։

Տ'ԱՆ. Կարծեմ այնպէս է (Աննա կը վերադառնայ յետոյ աղջիկ մը-նալով մը և ամանով մը գ՚ փնտռելով,

ղանակը դաշնակին աթոռին վրայ կը դնէ, և ինքը սեղանին վերի ծայրը նստելով ասեղնագործութեան կ'երթայ :

ԵՒԳ. Կամ շատ ես ըսեմ, Տիկին այդ Դանթէօյը տեսնելու գնաց :

Տ'ԱՎ. Կարելի է :

ԵՒԳ. (Բարկ-բերանով) Ցաւակցիս չունիմ, որովհետև ես կ'ըսէի Տիկին Դանթէօյը որ խաղցնի սիրով երթար, ինչու չի գնաց կը հարցնեմ ձեզի :

Տ'ԱՎ. (խօսակցութեան-բերանը) Շատ կը ցաւիմ տիկին որ չեմ կրնար պատճառը ձեզի իմացնել :

ԵՒԳ. (Ջղմնալ ոտքելով) Իրաւ որ, աղէկ եաւ ինչ որ ալ ըլլայ հոգս չէ, առաջները երբ երկիս խնդրի մէջ կը սիրէի, կարելի է որ եղանակին վրայ . . . բայց քիչ մը առաջ անտանձիս վրայ . . գիս բոլորովին մոռնալէն ետեւ . . :

Տ'ԱՎ. Ո՜հ, մանկ րոպէ սիրուն հարսն, կարելի է որ ինքը յանցանք չունի :

ԵՒԳ. Ինքը, հօր եղբայր իմ, ինքը, կը փայլէ կարդուած մարդու մը . . . :

Տ'ԱՎ. Կարդուած, բայց ինքը գրեթէ ալ կարդուած չէ :

ԵՒԳ. Ի՛նչպէս, հօր եղբայր իմ:

Տ'ԱՎ. Կամ բոլորովին ազատ, ինչու որ ամիսէ մը 'ի վեր անկախ և ինքնիշխան այս տեղ մինակ կապրի : Գիտցիր որ երբ երիտասարդ ամուսին մը այսպէս երեսի վրայ կը մնայ, աչուըներն ու սիրտը ուրիշ տեղեր կը դարձնէ :

ԵՒԳ. Ի՞նչ, այդպէ՞ս կը կարծես:

Տ'ԱՎ. Յիրաւի, շատ հաւանական ալ է :

ԱՆՆԱ. (որ արդէն մօտեցեր էր) Այո՛ կնքամայր իմ, մեծ անզգուշութիւն է թողուլ զիրենք ուզած տեղերնին երթալու. այնչափ ամուսիններ կան, զորոնք պահելը անհնարին է, շատ անգամ իրենց քովէն չի հեռանալով ալ. (Կերթայ կը նստի դաշնակին առջևին վրայ ու իր աշխանը կը շինէ)=

ԵՒԳ. Սակայն աս առտուան ինծի գրած նամակը . . . :

Տ'ԱՎ. Ո՛ն ալ, խիստ մեծ դժուարութիւններով կըցայ իրեն գրել տալ, կրնամ ըսել որ ես շարադրեցի :

ԵՒԳ. Ո՞րչափ բարեսիրտ էք եղեր, հօրեղբայր իմ.

Տ'ԱՎ. Արդէն այն նամակին խրկելուն վրայ կը զղջամ, երբ մօրդ պատասխանը վրայ հասաւ, ու իր ազատութեան և ամուրի կենաց քաղցրութիւնը նորէն արծարծեց սրտին մէջ :

ԵՒԳ. (տարտամած) Ո՜հ, Աստուած իմ, (Ջերմանալով) բարեբաղդաբար դուք հոս էք այնու հօրեղբայր իմ, ինչու որ դուք խիստ բարի էք և վստահ եմ որ զիս կը սիրէք . . . ես արդէն ձեզ կը սիրեմ:

Տ'ԱՎ. (մէկդի) Խեղճ կին, զիս 'ի գութ կը շարժէ :

ԵՒԳ. (Մեղմաբար) ամուսինս ինծի կը դարձնէք այնպէս չէ՞, կը խոստանաք զինքը այս առտուան մէջ զիջանելու :

Տ'ԱՎ. (առանձինն) Քիչ մնաց որ ես ալ եղբօրորդւոյս նման պիտի

բանուէի · (ֆօրճը) ղեկավարելու :

ԵԻԳ. Այո, մէկ քանի զիջում-ներ ընելու, այսինքն եղածին վրայ ցաւելու, վերջապէս տե-սակ մը ներումն խնդրելու (ֆօր-ֆօթէրօլ) ուզածին չափ :

Տ'ԱՎ. Ինքը՞ :

ԵԻԳ. Միայն թէ ինքը մեր սա-քը գայ, ուրիշ բան չեմք պա-հանջեր :

Տ'ԱՎ. (ծաղրածութեամբ) Իրաւ :

ԵԻԳ. (անհամբերութեամբ) Ի՞նչ ընենք, ան ալ այս խոսակցութիւն-ները վերջացնելու համար, որով-հետև վերջապէս · · · :

Տ'ԱՎ. Ասանք Մարքիզուհոյն տը-ւած խրատներն ըլլալու են, կե-րեւայ որ աշակերտներ կը հա-ցընէ :

ԵԻԳ. Ի՞նչու չես պատասխա-ներ, հօր եղբայր իմ :

Տ'ԱՎ. Չըլլայ թէ փչանաս ը-սածիս, սիրելի հարսս, բայց կը տեսնեմ որ դեռ ամուսնոյդ բը-նաւորութիւնը չես ճանչցած :

ԵԻԳ. Ի՞նչ կըսես, ինչ չեմ ճանչ-նար զինքը, ինքը անանկ բարի, ազնիւ ու հեզ · · · :

Տ'ԱՎ. (ընդ միջէրով) Կարելի է որ առաջ այնպէս էր, բայց եթէ գիտնայիր թէ միայնութիւնը որչափ կը դառնացնէ մարդուս բնութիւնը որ · · · :

ԵԻԳ. (սարսափած) Մէկ ամըս-ւան մէջ ո՞րչափ փոփոխու-թիւն · · · · :

Տ'ԱՎ. Մէկ ամսուան մէջ շատ բաներ կը պատահին, և կարելի է որ ատ գխալուածէն ալ (պատե-ժամը ցուցնելով) կրած ըլլայ :

ԵԻԳ. Ի՞նչպէս, կարծեմ թէ ես վնասուեցայ :

Տ'ԱՎ. Իրաւ է · · · սակայն կե-րեւի որ այն դէպքը իր վրայ գէշ ազդեցութիւն մը ըրած է, և այս միջոցիս խեղճը իր ամէնը տէրը ըլլալ ուզելու ախտէն բը-նուած է :

ԵԻԳ. Ինչե՞ր կը լսեմ :

Տ'ԱՎ. Ու ասոր համար կ'ու-զէ, կը պահանջէ :

ԵԻԳ. (սարսափած) Ի՞նչ, ի՞նչ :

Տ'ԱՎ. Կ'ուզէ որ իրեն սիրոյ նա-մակ մը գրես :

ԵԻԳ. Սիրո՞յ, սա ալ բա՞ն է, այս, այս, այս, կը գրեմ երբ որ ուզէ :

Տ'ԱՎ. Անոր հետ անցածին վը-րայ փշմանալդ յայտնես, ըսել կ'ուզեմ տեսակ մը ներումն խնդ-րես :

ԵԻԳ. Ե՞ս ներումն խնդրեմ, յայտնեմ որ յանցանքը իմս է, երբեք :

ԱՆՆԱ. Այո · պէտք է կնքամայր իմ, (գետնախոնջ-ընէրը ընէւը կը ըսը-նէ) :

ԵԻԳ. (Երկուքն) Մայրս հօրեւր անգամ ըսաւ որ ասիկայ իմ ազ-նուականութեանս անարգանք մըն է, ըսաւ նաև որ եթէ մէկ անգամ զիջում ընեմ, ալ ամէն բան կը լմննայ, և բոլոր իրա-ւունքս կը կորսնցնեմ · · · :

Տ'ԱՎ. Ա՜հ · · · ատանք են ու-րեմն Մարքիզուհւոյն խրատները այս է ուրեմն իր սկզբունքը :

ԵԻԳ. Այս հօրեղբայր իմ, իմ սկզբունքս է այս :

Տ'ԱՎ. Ուր կը մնայ ուրեմն ա-

մուսնոյդ հնազանդելու պարտ-քըդ ։

ԵՒԳ. (ծաղրածութեամբ) Հնա-զանդութիւն, ահա բառ մը որ բնաւ չեմ լսած. (Յետոյ մեղմանա-լով) վերջապէս հօրեղբայր իմ չեմ ուզեր ձեզի հետ ալ սրդո-ղիլ, ուստի ձեզ հաճելու հա-մար միայն, մէկ քանի զիջում-ներ կընեմ ։

ԱՆՆԱ. (ուրախութեամբ) Աս ա-ղէկ, կնքամայր իմ ։

ՏԻԱ. Ո՞րոնք են այդ շնորհք-ները ։

ԵՒԳ. Ինչ որ Բասուլ պահանջէ ։

ԱՆՆԱ. (ուրախութեամբ) Շատ լաւ, շատ լաւ ։

ԵՒԳ. Միայն թէ ինքը մեր տու-նը գայ ։

ՏԻԱ. (Երթալով. առանձինն) Այն վերջը կը տեսնենք. և երբ իմ վերջնագիրս ստորագրուի . . .

ԵՒԳ. Ի՞նչպէս, կերթաք ։

ՏԻԱ. Իբր իւր առաջարկը ըն-դունած դեսպան մը, ինչու որ արդէն հաստատ եմ որ եղբօր-որդիս պիտի մերժէ ։

ԵՒԳ. Բայց հօրեղբայր իմ . . .

ՏԻԱ. Պիտի մերժէ . . . պիտի մերժէ . . . (պատշգամէն ներս կը մտնէ)

---

## ՏԵՍԻԼ Ե.

ԵՒԳԻՆԷ. ԱՆՆԱ

ԵՒԳ. Ես կ'ըսեմ թէ, եթէ համարձակի մերժելու . . . ։

ԱՆՆԱ. Ի՞նչպէս կնքամայր իմ։

ԵՒԳ. (առանձին դարձած) Երբեք տեսնուած չէ սանկ յիմա-րութիւն մը, կերեւայ որ իւր ցեղին մէջ ամէնքն ալ այսպէս են, դուն ալ տեսար, ինձմէ ի-րաւասէր մէկը չի կայ, զիջում-ներ անգամ ըրի ։

ԱՆՆԱ. (մեղմաբար) Ո՛հ, կնքա-մայր իմ, ինչո՛ւ այդչափ կը բար-կանաս ։

ԵՒԳ. (նոյնը) Ի՞նչպէս չի բար-կանամ, երբ զիս տղու մը տեղ կը դնեն, երբ կառաջարկեն խո-նարհելու հնազանդելու ։

ԱՆՆԱ. (վստահութեամբ) Երկա՞նդ ի՛նչ վնաս ունի, պէտք է հնա-զանդիլ ամուսնոյդ, ասիկայ ա-մօթ բան չէ (գոգնոցին հետ խաղա-լով) ընդհակառակը երբեմն եր-բեմն զուարճալի ալ է ։

ԵՒԳ. Լաւ, լաւ. եթէ մայրս լսէր ։

ԱՆՆԱ. (բարկանալով) Թող լսածս լսէ, ի՛նչ կըլլայ, Տ. Մարքիզու-հին Պ. Բասուլին զօքանչն է, ին-քը չի կրնար գուշակել ձեր միտ-քէն անցածը, ձեր զգացածը, իւր կամացը համեմատ կը վար-ուի. իրեն հոգն է, բայց դուք ուրիշ. դուք իրեն կինն էք, ու-րիշ խօսք է թէ որ չէք սիրեր ա-մուսինիդ ։

ԵՒԳ. Ընդ հակառակը կար-ծեմ թէ երբեք այսչափ չէի սի-րած, ասիկայ է որ զիս կը կատ-ղեցընէ ։

ԱՆՆԱ. Ուրեմն եթէ այդպէս է ։

ԵՒԳ. Բայց մայրս երբեք չի ներեր ինծի խոնարհելու, իւր տաքը երթալու :

ԱՆՆԱ. Բայց այս քեզի կը վերաբերի :

ԵՒԳ. Եթէ այնպիսի բան մը ընելու ըլլամ, զիս որդիութենէ կը մերժէ և խոստումս ալ ունի :

ԱՆՆԱ. (Բարկութեամբ) Անիրաւութիւն ըրած կ'ըլլայ (Ցոյցը փոխելով) Թէպէտ և ամենայն յարգանք պարտիմ իրեն . . . . կը տեսնամ որ ատելի գաղափար մը ունինք հնազանդութեան վրայ, բայց ընտանեաց մէջ ատկէ դիւրին բան չկայ :

ԵՒԳ. Ինչպէս դիւրին . . . . գերիի մը պէս հնազանդի՞լ :

ԱՆՆԱ. Իմ ըրածս ալ աս է, Գ. Շահին մէկ խօսքը երկուք չեմ ըներ, և ամենայն առանց ալ ըն-բռնել Գ. Շահ աւելի ինծի կը հնազանդի քան թէ ես իրեն :

ԵՒԳ. Այդ ինչպէս կարելի է :

ԱՆՆԱ. ( Չորս կողմը նայելէ ետքը ) Նախ և առաջ կ'ուզեմ չեմ ըներ, այլ միշտ փայփայելով կը ջանամ որ իմ ուզածս ինծի հրամայէ . այն ատեն կը հնազանդիմ այնպիսի առաքինութեամբ մը որ ինքն ալ կը զմայլի, ես ալ, ատանկով երկուքիս ալ փափաքը կը կատարուի :

ԵՒԳ. Իրաւ կ'ըսես ( աջ կողմէն Մարքիզուհին յայտնուելով ) Տէր Աստուած մօրս ձայնն է . ( Կ'երթայ կենաց դաշտերնուն ձախ—կողմին վրայ ) :

## ՏԵՍԻԼ ԺԲ.

ԲԱՍԻԼ (պատշգամէն երևալով) ԱՆՆԱ . ԵՒԳԻՆԷ . ՄԱՐՔԻԶՈՒՀԻՆ (ապարանքին դրան) .

ՄԱՐՔ. ( Եկած ձախին դուռէն ) Այո, Գ. Շահ, անվայել է կը-նեմ այս խաղերը և ուրախութիւնը :

ԱՆՆԱ. ( ականջին ցած ըսելով ) ո՜հ խեղճ ամուսինս ( Մարքիզուհին Գ. Շահին ցոյցը ըրել կը ջանայ որն որ ձախ կողմէ ընթրին մէջն է, Աննա Մարքիզուհւոյն ձեռքը և կը ջանայ զինքը հանդարտեցնելու ) :

ՄԱՐՔ. Ի՞նչ . ձեզի հրամա՞ն տուի՞ն, և ո՞վ տուաւ այդ հրամանը :

ԲԱՍԻԼ. ( պատշգամէն իջնելով ) ո՛չ, ո՛չ, հօրեղբայրս որչափ որ զիս ջանայ համոզելու, երբեք չկրնար ստորագրել տուած մերձաւորը : կ'ընես հա՛ս ( Եւգինէին կը մօտենայ և ձեռքէն կը բռնէ ), մայրը հետն է, պատուհասիս ( Ետ կը դառնայ և պատշգամին տակը ծառերուն մէջ կը պահուըտի ) :

ԱՆՆԱ. ( Մարքիզուհւոյն ) Գ. Բասիլին հրամանն է Տիկին, անանկ չէ՞ ամուսինս ( ականջը կը ծռէ ) :

ԵՒԳ. Սակայն և այնպէս երկկուս ալ նոյն է, մայր իմ :

ՄԱՐՔ. ( խիստ ձայնով ) որո՞ւ նոյնն է, այս ազատամտին որ մենք ունենինք իրր օծեալ հարսանեաց օրը :

ԵՒԳ. Ինչու չէ, սովորական դու իրեն տուիր, ինծի է :

ՄԱՐԹ. (ոտքերը վեր վերցնելով) Այդ գնով, դու ալ կրնաս, իմ ինչքը, իմ ստացուածքն ես ։

ԵՒԳ. Կրնայ պահանջել ։

ՄԱՐԹ. Նախեղի խօսք . . . . ես քաղաքէն կուգամ, մեր փաստաբանը տեսայ, ինքն ալ կը հաստատէ մեր իրաւունքը, բանու որ յաղթութիւնը մերն է, և պէտք է մարտնչիլ ։

ԵՒԳ. Փաստաբան մը, հարկաւ ։ Քիչ մը առաջ, դու երթալէդ ետև, Պ. տ'Ալֆրէտին հանդիպեցայ հոս, որն որ իւր եղբօրորդւոյն կողմանէ առաջարկութիւններ բրաւ ։

ՄԱՐԹ. (յաղթական ձևով մը) Կը տեսնե՞ս, քեզի չըսի որ ժամանակի և հաստատամտութեան կարօտ է, հահ, հահ, վերջապէս, կը պարտաւորին մեր ոտքը գալու ։

ԵՒԳ. Այո, մայր իմ, եկաւ ինծի առաջարկելու որ Էրկման սիրախօսն փոքրիկ նամակ մը գրեմ ։

ՄԱՐԹ. Երբեք ։

ԵՒԳ. (բորբոքելով) Ես ալ այնպէս ըսի. կ'ուզեն որ նամակիս մէջ փոքր ինչ վշտակութիւն խառնեմ, ոչ, ոչ, տեսակ մը ներումն խնդրեմ ։

ՄԱՐԹ. Ներումն խնդրել, գուն ալ մանկիկ բերի՞ր բառնելը, թողուցիր որ վերջացնէ խօսքը ։

ԵՒԳ. (նեղնալով) Երբեք մայր իմ մերժեցի, մերժեցի ։

ՄԱՐԹ. (աղջիկը գրկելով ուրախութեամբ) Սիրելի աղջիկս, պիտի վարձատրուիս դու մօրդ սիրովը և համակրութեամբը ։

ՐԱՈՒԼ. (մէջը պատշգամբին տակը ծառեններուն տակը պահուըտած) Անուշիկ կեսուր ։

ՄԱՐԹ. Ի՞նչ կը կարծէ որ այդչափ նուաստութեան յանձն առնունք, մինչդեռ բոլոր յանցանքը իրն է, ու մահուան պատճառ պիտի ըլլար ։

ԵՒԳ. (յախտամայն) Այդ մասին մայրիկ, պէտք է քեզի ըսեմ որ երբեք վտանգի ենթակայ չեմ ։

ՐԱՈՒԼ. (առանձին) Ի՞նչ կըսէ ։

ՄԱՐԹ. Վտանգի ենթակայ չէիր, խենդ ես աղջիկ, չէ՞ս մտածեր որ առանց այն յարգին պիտի մեռնէիր ։

ԵՒԳ. Այո, մայր իմ. բայց գիտէի որ հոն յարդ կար ։

ՐԱՈՒԼ. (առանձին) Տէր Աստուած ի՞նչ կը լսեմ ։

ՄԱՐԹ. (զարմացմամբ աղջկանը նայելով) Գիտէիր, ահ, հիմայ զքեզ կը ճանչնամ՝ արիւնս ես եղեր, իմ աղջիկս ըլլալու արժանի ես դու, (կը գրկէ աղջիկը) ։

ՐԱՈՒԼ. Գիտէ եղեր, ու զիս ամեն մը երեսի վրայ թողուց, ուրեմն զիս չի սիրեր, ալ ատկէ ետև հօրեղբայրս ինչ որ ուզէ կը ստորագրեմ (մէկէն ներս կը մտնէ) ։

## ՏԵՍԻԼ ԺԳ.

ԵԻԳԻՆԷ, ՄԱՐՔԻԶՈՒՀԻՆ.

ԵԻԳ. Շնորհակալ եմ, մարքիզ, շնորհակալ եմ ըրած գովեստներուդ, բայց կը տեսնես որ ինքը յանցանք չունի։

ՄԱՐՔ. Զգեննք որ այնպէս կարծեն, մեզի այն պէտք է, ջանանք ուրեմն անկէ օգուտ քաղելու, որպէս զի կարենաս յաւիտեան իշխել իր վրայ, երբեք մոռցնել թէ որ գերի չըլլան, անգգամ կըլլան ուստի պէտք է որ զմեզ պատուեն (յէ մը ընելով) ծնրադրութեամբ։

ԵԻԳ. Շատ աղէկ մայր իմ, բայց եթէ ամուսինս չուզէ մեր գերին ըլլալ։

ՄԱՐՔ. Պիտի տեսնես թէ ինչպէս կը հնազանդեցնեմ զինքը։

ԵԻԳ. Եթէ մեր տաճարկութիւնները մերժէ, ու մեզի այնպէս դիմանայ մինչեւ վերջը։

ՄԱՐՔ. Աստուած տար որ այնպէս ըլլար։

ԵԻԳ. Այն ատենը, արդեօք ի՞նչ պիտի պատահի, այս մտածմունքը զիս կը դողացնէ։

ՄԱՐՔ. Ես ալ այն վայրկենին կ'սպասեմ, մէկ խօսքով պիտի տապալեցնեմ զիրենք, մանաւանդ սա ծեր ս'Ալբրուլ մարքիզը, որուն վրայ կը կասկածիմ որ չըլլայ թէ եղբօրորդւոյն չար խորհուրդներ տայ։

ԵԻԳ. (անկողնամանկութեամբ) Ի՞նչը չեմ յուսար։

ՄԱՐՔ. Գիտցիր սիրելիս որ ընտանեաց մէջ չար խորհուրդներ տուողները այնպիսի անձինք են որ պէտք է . . . լաւ է ահա ինքը։

## ՏԵՍԻԼ ԺԴ.

Տ'ԱՎՐԹՈՒՐ (պատշգամէն ելլելով) ԵԻԳԻՆԷ. ՄԱՐՔԻԶՈՒՀԻՆ (թատրոնին մէջ կողմը) ԱՆՆԱ (խորը).

Տ'ԱՎ. (պատշգամին դուռը բանալով եւ բարձրաձայն) Հանդարտէ Բաուլ, այս երեկոյ կամ մինչեւ վաղը առաւօտ ամեն բան պատրաստ կ'ըլլայ. երկայն չի՞ տեւեր կառքի մը նորոգումը, երթամ տեսնեմ պարտէզին մէջ (Աննան տեսնելով որ երեւան կելլէ) հա՛հ, տիկին Շափի, կառքս շտկեցի՞ն։

ԱՆՆԱ. Շատոնց, պարոն Շափին ուժը բաւական եղաւ զանի մէկէն շտկելու, ահա հոս . . . . .

Տ'ԱՎ. Գիտեմ։

ԱՆՆԱ. Ամենեւին վնասուած չէ։

Տ'ԱՎ. Ուրեմն կրնանք անդադար ճամբայ ելլել։

ԱՆՆԱ. Դուք գիտէք։

Տ'ԱՎ. Եղբօրորդւոյս հետ։

ՄԱՐՔ. ու ԵԻԳ. (առանձին կամաց) Ի՞նչ, եղբօրորդի՞ն։

Տ'ԱՎ. Ներեցէք տիկնայք, ձեր հոս ըլլալը չի գիտէի։

ԵՒԳ. Այո՛, հօրեղբայր իմ, բոլոր խօսքերնիդ իմացանք, ճամբայ ելլելու կը պատրաստուինք։

Տ'ԵԱ. Ի՞նչ ըսեմ, ուրիշ ճար չկայ իւր ամուսնութիւնը քիչ մը մոռցնելու, ուստի որոշեցի որ ճանապարհորդէ իւր մէկ քանի բարեկամացը հետ, այսինքն Պ. տը Նանթէօյլ և . . . ։

ԵՒԳ. (Բարկութեամբ) Եւ իւր կնիկը . . . ։

Տ'ԵԱ. (Սրդողութեամբ) Քննականաբար, Ֆոնթէնպլօյէն սկսեալ ու մինչև Կ. Պօլիս պիտի երկարի։

ԵՒԳ. (Նոյնը) Կ. Պօլիս, ուր նստեալ է ու պաշտելի չափ կին առնելը (Մարգարիտային ձեռքը կ'առնէ) դուք ալ հրաման տուիք, հօրեղբայր իմ, դուք իր միայն փախելու չարժանացաք։

Տ'ԵԱ. Ես ի՞նչ կրնամ ընել, դուք կրնայիք ճար մը ընել, չուզեցիք, և հիմա ինչպէս որ կը կարծէի, այնպիսի անանցք և չափազանց առաջարկութիւններ կ'ընէ և կը պահանջէ։

ՄԱՐԳ. (առանց լսելու, երկարաւ) Մեր պայմանները առաջարկել, ինչ մէ որ եմ Մարքիզուհին Լեռապան ի։

Տ'ԵԱ. Այո՛, խնդրած պայմանները, անիրաւելի, անպարծառելի են, ես ալ գիտեմ. և թէպէտ ինծի յանձնեց պատրաստութիւնը, ես պատասխանեցի որ չեմ համարձակիր այդպիսի յանդգնութեան մը։

ՄԱՐԳ. (Հպարտութեամբ) Հարկաւոր աւելի լաւ էք։

ԵՒԳ. Այդպէս է, բայց և այնպէս չէ՞նք կրնար իմանալ արդեօք սա պայմանները։

Տ'ԵԱ. Ո՛չ, սիրուն հարս, աւելի աղէկ կ'ըլլայ որ չիմանաս։

ԵՒԳ. Ի՞նչ միտս ունի։

Տ'ԵԱ. (Գրպանէն թուղթ մը հանելով և վեր վեր խաղցնելով այնպէս որ Եւգինէ չկրնար առնել)։ Տիկին Մարքիզուհւոյն վերջնագիրը եղաւ որ քիչ մը խիստ էր, բայց ամուսնոյդ խրատը այնչափ անընդունակ է որ չափը կ'անցնէ։

ԵՒԳ. (Վերջապէս թուղթը կ'առնէ) Ինչ որ ըլլայ, տեսնենք։

ՄԱՐԳ. (աղջկանը ձեռքէն յափշտակելով) Ո՛չ դու, այլ ես միայն։

ԵՒԳ. (Ս'Ալֆոնսին ցուց տալով) Արդեօք բաժնուիլ չափ սոսկալի է։

Տ'ԵԱ. Ո՛հ, Տիկին չափազանց սոսկալի է, և անկէ պատ ալ ուրիշ կերպով հաշտութիւն չընդունիր։

ԵՒԳ. Հաշտութիւն, ուրեմն կը բաղձայ հաշտութեան։

ՄԱՐԳ. (պոռալով) Ո՛հ, հիմայ կը խենթենամ, յանդուգն չարագործ։

ԱՆՆԱ. Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ։

ԵՒԳ. Ի՞նչ — բարկացար այդչափ մայր իմ, ի՞նչ եղաւ։

ՄԱՐԳ. (կ'երթայ աթոռին վրայ կ'ինկնայ) Անիկայ անլուր բան է, անտանելի է։

Տ'ԵԱ. (Բարկութեամբ) Ես ձեզի չըսի՞։

ՄԱՐԳ. (կարդալով) «Գրեթէ ամուսնալով երջանիկ ըլլալու ըլլամ, կը բաղձամ գրկել զքեզ որպէս մըրայ»։

ԵՒԳ. (Գոռալով) Այդ տեղ

Ի՞նչ միտս կայ ։

ՄԱՐԹ. (Նոյնպէս) «Միշտ կընդունիմ գըրել այս տանը մէջ որ մերն է»....

ԵՒԳ. (Նոյնպէս) Աս ալ աղէկ ։

ՄԱՐԹ. (Նոյնպէս) «Ուր երկար տանէ՝ ի վեր մինակ եմ»...։

ԵՒԳ. Խեղճ տղայ ։

ՄԱՐԹ. «Իմայ պատուհանէն դուրս ելայ»...։

ԵՒԳ. (անհամբերութեամբ) վե՞րջը։

ՄԱՐԹ. (ոտքը հարուածի պէս) «Ուստի պատուհանէն պէտք է»..։

ԵՒԳ. (Նոյնպէս) վերջացուր ։

Տ'ԱՎ. (պաղարիւնութեամբ և ծխախոտ մը ծխելով) «Պէտք է ներս մտնես»։

ԵՒԳ. Մի՛ երկնցներ, ի՞նչ կըսեմ։

ԱՆՆԱ. (խնդալով արտասուելով) Կ'ուզէ որ կնքամայրս պատուհանէն ներս մտնէ. ի՞նչ խնդալու բան ։

ՄԱՐԹ. (Հպարտութեամբ գիրքը վերցնելով) Ի՞նչ... (Աննա ձեռքին և ծածկարանը կը ձգէ, Մարթիղին ուշի ելլելով) ի՞նչ անպատիւ, անգթամ և անարգ տաճարկութիւն ։

Տ'ԱՎ. Ոչ ձեզի բան, բայց դուք ուզեցիք անպատաձառ փխնալ ։

ՄԱՐԹ. Ու կը կարծէք որ ...։

Տ'ԱՎ. Կըրէք, փառք օրը, նախ հաստատ ըլլալով որ եղբօրորդիս իւր վերջնագրէն մէկ բառ մը չի պիտի փոխէ, երկրորդ գուշակելով ձեր պատասխանը և գիտնալով որ հարսս անշուշտ պիտի մերժէ, բոլոր ջանիւքս աշխատեցայ դէնքը այս ճանապարհորդութեանը յորդորելու և կարծեմ թէ իւր սիրտը քիչ մը հանդարտեցնելու համար անկէ ուրիշ ճար չկայ, հիմայ երթամ պէտք եղածը հոգամ։

ՄԱՐԹ. Այո՛, պէտք է որ իրարմէ բաժնուին, մեր ուզածն ալ ան է ։

ԵՒԳ. Մայր իմ. . . . ։

ՄԱՐԹ. (աջ կողմը նայելով) Հասկըցայ . . . հիմայ այս նիւթիս վըրայ Պ. Մարքիզին հետ պիտի խօսակցիմ, դուն գնա դպեանը որդւոյն, քիչ մը ետքը ես ալ կը դառնամ, հիմայ խմացուր թէ որչափ կը սիրէ եղեր զքեզ անխոսինդ ։

ԵՒԳ. Ո՛հ, այս, կը տեսնեմ որ իւր սէրը կորեր է վրայէս, ինծի հետ հաշտուելու համար այնպիսի բաներ կը պահանջէ որոնք (պարզմտութեամբ նայելով) անկարելի են

ՄԱՐԹ. Անշուշտ ։

Տ'ԱՎ. Այո՛, անկարելի են ։

ԱՆՆԱ. (ծածկարին մէկ կողմը եղողներուն որն որ ծածկարին մէջ կողմը կեցեր է) Ինչու համար անկարելի պիտի ըլլայ ։

ԵՒԳ. (Նոյնպէս) Ի՞նչ ըսել կ'ուզես ։

ԱՆՆԱ. Ըսեմ կնքամայր իմ, և չըլլայ թէ ձայն հանես, (ապարանը կը մտնէ)։

## ՏԵՍԻԼ ԺԶ.

### ՏԱՂՐԲՈՒՐ, ՄԱՐԳԻԶՈՒՀԻՆ.

(Կամաց կամաց գիշեր կ'ըլլայ).

ՄԱՐԳ. (որ ցած ձայնով կը խօսէր Տ'Աղրբուրին հետ բարկութեամբ) Մի՛ կարծեր թէ խաբեցիր զիս երբեք, ասոնք բոլորն ալ քու հարուածներդ են. (Բողոքը կը ցուցնէ)։

Տ'ԱՂ. (արհամարհութեամբ և հեղձելով) Ե՞ս . . . ի՛նչ ախկլին, կարծէք թէ կարող եմ։

ՄԱՐԳ. (բարկութեամբ) Այո՛, պարոն ամենայն չարեաց։

Տ'ԱՂ. (խոնարհելով) Մեծ պատիւ է ինձ ձեր բառծը Տիկին Մարքիզուհի։

ՄԱՐԳ. Գիտեմ որ երբեք չներեցիր ինծի, քու անդդ Լեոպոալ Մարքիզը ընտրելուս . . . ։

Տ'ԱՂ. Մանաւանդ թէ շատ գոհ եղայ։

ՄԱՐԳ. Անհաւատալի է այդ, իրեն հետ ամուսնանալուս պատճառ ինծի դէմ յաւիտեան ոխ կը պահես, և ամէն վայրկեան մեր սէրը քու կատաղութիւնդ կ'աւելցնէ։

Տ'ԱՂ. Ոչ Տիկին. ամէն վայրկեան իր երջանկութիւնը, իմ հաճութիւնս կաւելցնէ։

ՄԱՐԳ. (հեգնութեամբ) Ի՛նչ ըսել կուզես։

Տ'ԱՂ. (ուժով) ըսել կուզեմ թէ, եղբօրորդիս սիրով ամիմ։

ՄԱՐԳ. Շատ աղէկ, բայց աւաղ պէտք է որ օրինաւոր, կերպով իրարմէ բաժնուին։

Տ'ԱՂ. Ինչ պէտք կայ ուրիշ միջոցներ ու քանի որ արդէն իրարմէ բաժնուած են։

ՄԱՐԳ. Կուզեմ որ գործը օրինաւոր կերպով ըլլայ։

Տ'ԱՂ. Ի՞նչ պատճառաւ.

ՄԱՐԳ. Պատճառները չեն պակսիր, նախ ես փաստաբան մը ունիմ։

Տ'ԱՂ. Ես ալ երկու հատ կունենամ։

ՄԱՐԳ. Դուք զմեզ նախատեցիք, զմեզ պատուհանէն դուրս նետեցիք։

Տ'ԱՂ. Ամենեւին, դուք ինքնին նետուեցաք։

ՄԱՐԳ. Կրնայինք մեռնիլ, դատաստանական ատեանը պիտի հաստատէ։

Տ'ԱՂ. Յարդին վրայ իյնալով, առաջուց գիտէիք թէ յարդ կար դուք ըսէք, դատաւորները պիտի հաստատեն։

ՄԱՐԳ. Հիմա բարկութենէս կը խեղդուիմ։

Տ'ԱՂ. Ալ փոյթ չընեմ Տիկին։

ՄԱՐԳ. Ես փաստեր շատ կը գտնեմ։

Տ'ԱՂ. Կը յուսամ որ չի կարենաս գտնել։

ՄԱՐԳ. Այն ատենը կը հնարեմ։

Տ'ԱՂ. Բերդի մէջ գիտուն և ճարտար կին մը ինչե՞ր չի հնարեր։

ՄԱՐԳ. Կատաղութիւնս վերջին աստիճանի հասաւ. բայց և այն-

մէջ ձեր համբան պիտի կտրեմ, հոս կռուիլ կուզեմ քեզի հետ Թող չեմ տար որ երթաք ։

Տ'ԱԼ. Որչափ զայրանաս, պոռաս, կատղիս, չպիտի կարենաս մեր համբան կտրել. կռուիլ կուզէ իմ հետս, հա՛հ, հա՛հ, ի՛նչ կատաղութիւն ։

ՄԱՐՔ. Յիրաւի քու համառութիւնդ չունիմ, բայց պիտի կարենամ համբանիդ կտրել, չունիմ քու համարձակութիւնդ, մանաւանդ հնարագիտութիւնդ բայց չպիտի թողում որ երթաք ։

Տ'ԱԼ. Խնդրեմ Տիկին . . .

ՄԱՐՔ. Ո՛չ, ո՛չ, ո՛չ, կերդնում որ չպիտի երթաք ։

Տ'ԱԼ. Կեսուրը խնդրեմ, կարծէ թէ կրնայ զմեզ արգիլել ։

ՄԱՐՔ. Թէ որ պէտք ըլլայ զօրականներ կը կանչեմ և կարգիլեմ զձեզ ։

Տ'ԱԼ. Զօրականներ պիտի կանչէ, հա՛հ, հա՛հ, ալ գործը լմնցաւ. (Մարքիզուհին դուրս կը վազէ) ։

## ՏԵՍԻԼ ԺԶ.

ԲԱՈՒԼ (պարտիզէն ելլալով) Տ'ԱԼՐՔՈՒՐ.

Տ'ԱԼ. (խնդալով) Հա՛հ հա՛հ հահ ։

ԲԱՈՒԼ. Տէր Աստուած, ի՛նչ կայ հօրեղբայր իմ, ի՛նչ եղաւ, ատ ի՛նչ աղմուկ է, ի՛նչ պոռալու ձայներ են ։

Տ'ԱԼ. Ոչինչ, հանդարտութեամբ կը խօսէի զօքանչիդ հետ գիտե՞ս սաստիկ զայրացած է ։

ԲԱՈՒԼ. Անշուշտ, մեր, այսինքն քու վերջնագիրդ պատճառ եղաւ ։

Տ'ԱԼ. Այս վերջնագիրը ամէն բան տակն ու վրայ ըրաւ, իմ ուզածս ալ այն էր ։

ԲԱՈՒԼ. Ա՛հ, հօրեղբայր իմ, կարծեմ չափէն աւելի էր ըրածնիս, և հիմայ հետեւանքներէն կը վախնամ . . . . ։

Տ'ԱԼ. (զուարթութեամբ) Հետեւա՞նք, հետեւա՞նք ըսիր (Բաուլին վրէ ծայրը նայելով), մարդու շուք կը տեսնեմ սա տեղ, ո՞վ է արդեօք ։

## ՏԵՍԻԼ ԺԷ.

Տ'ԱԼՐՔՈՒՐ, ԲԱՈՒԼ (աջ կողմը և պարտիզին ծառոց ծածկուած).
ԵՒԳԻՆԷ և ԱՆՆԱ (ձախէն աջ կողմէն կուգան սանդուղքի մը երկու ծայրէն բռնած).

ԲԱՈՒԼ. Ի՛նչ կը տեսնեմ, կինս Եւգինէն է ։

Տ'ԱԼ. Տիկին Շամին հետ (Եւ կը դառնան և ծառերուն ետեւ կը պահուըտին) ։

ԱՆՆԱ. Զգուշութեամբ քալենք, Տիկին, թեթեւ և փափուկ բան մը չիկայ և կատարեալ յուսով սալ երթանք, մինչեւ որ սէրն է մեզի առաջնորդ ։

ԵՒԳ. Ո՛հ, ի՜նչ տանջանք է այս։

ԱՆՆԱ. Այս բան մը չէ Տիկին, սպասուածք մը նորէն ձեռք ձգելու համար։

ԵՒԳ. Ի՞նչ յոգնութիւն։

ԱՆՆԱ. Կարծես թէ սիրական էրիկ մը փնտռելը դիւրին է, (ծառային Մօրենայինան ըսէ, Եւգինէ առաջ կանգնի եւ դէպ ՚ի վար կը նայի։)

ԵՒԳ. Զգուշութիւն և չըլլայ թէ ձայն հանենք, ինչու որ սէրն է մեզի առաջնորդ։

Տ'ԱՎ. Զգուշութիւն, տեսնենք թէ սէ՞րն է զինքը հոս բերողը։

ՌԱՈՒԼ. Որչափ որ ջանամ, չեմ կրնար սիրտս բաժնել իրմէ, արդեօք սէ՞րն է պատճառ հոս գալուն։

ԵՒԳ. (սանդուղը բռնելով) Ո՞րչափ ալ ծանր է։

ԱՆՆԱ. (կամաց մը վար դնելով) Ուրիշ քիչ մը համբերենք (առաջնորդան զ'Ալզօր եւ Ռաուլ ծառային ծածկուած։)

ՌԱՈՒԼ. Ի՞նչ էր բերածնին։

Տ'ԱՎ. Կարծեմ գուշակեցի։

ԵՒԳ. (յետոյ կը շնչելով) Աւելի պզտիկ մը չկա՞ր որ այն առնէիր։

ԱՆՆԱ. Ոչ, պէտք է որ մեծ ըլլայ հոն հանելու համար։

Տ'ԱՎ. (որ անձայն ու խարխափելով ծառային ետեւէն սանդուղը բռնելով, ցած ձայնով) Սանդուղը մըն է։

ՌԱՈՒԼ. (նոյնպէս) Տէր Աստուած, և ի՞նչ է արդեօք նպատակնին։

Տ'ԱՎ. (նոյնպէս առանձին) Լաւ է, (ձեռք մը ափօրանք կը տանի)։

ԱՆՆԱ. Նայց ինչու չի թողուցիր որ իմաց տայի Պ. Շարլին, որն որ այս առտու ըզքեզ փետուրի մը նման կը վերցնէ (հասարակութեան) ինչու որ շատ ուժով է Պ. Շարլ։

ԵՒԳ. Նորէ՛ք, եթէ մէկը մեր գաղտնիքը իմանար, ամօթէս պիտի կանցնէի։

ԱՆՆԱ. Ինչու՛ կերամայր իմ, ամենայն իրաւունք ունիս, քանի որ ամուսնոյդ առնը երթալու համար է միայն։

ՌԱՈՒԼ. (առանձնաբար) Ո՛վ Եւկինէ։

ԱՆՆԱ. Ուզես դուռնէն կը մտնես ուզես պատուհանէն, ո՞վ կրնայ խառնուիլ, բայց եթէ առանձ ճամբայ մը բանէիր ուրիշ մը առնը երթալու համար, այն ատենը . . . .

Տ'ԱՎ. Ի՞նչ խելացի է աս կինը։

ԱՆՆԱ. (սանդուղը կը վերցնէ եւ պատուհանին առջեւ կը դնէ) Ալ քեզի պէտք չունիմ։

ԵՒԳ. Ինչո՞ւ, չե՞ս ուզեր որ օգնեմ։

ԱՆՆԱ. Ո՛չ, արդէն ես պատշաճին պէտք կը թողնեմ։

ԵՒԳ. Բայց գուշակեր որ չի մնասուիս։

ԱՆՆԱ. Ա՛հ վախնար, աս սանդուղքը շատոնց զիս կը ճանչնայ։

ԵՒԳ. Ալ աղուոր ըսի քեզի։

ԱՆՆԱ. (խնդալով) զիս կը ճանչնայ։

ԵՒԳ. (պատուհանը յօժարելով) Ինքը տունն է, կարելի է որ մեզ լսէ։

ԱՆՆԱ. (սանդուղը հաստատելէն ետեւ) Ահա, աղէկ մը հաստատուեցաւ, եկ նայինք, ծնկ յառաջ բերելին վրայ։

ԵՒԳ. (սանդուղին դպչելով) Իսնայէ Աննա, կերեւայ, չեմ համարձակիր, կը վախնամ։

ԱՆՆԱ. Ես տաքով կը բռնեմ, դուն ալ մի վախնար։

ԵՒԳ. Պիտի բռնես անանկ չէ՞։

ԱՆՆԱ. Տէր Աստուած, աս ի՞նչ վախկոտութիւն է։

ԵՒԳ. (վար իջնելով) Ա՜հ։

ԱՆՆԱ. Ի՞նչ կայ։

ԵՒԳ. Ի՞նչպէս այս շրջազգեստով պատշգամին վրայ ելեմ։

ԱՆՆԱ. Մէկ երկու տաք ելլելէդ ետեւ կը դիւրանայ։

ԵՒԳ. Կը կարծես։

ԱՆՆԱ. Հիմայ ալ, վերջը կը մտածենք։

ՐԱՈՒԼ. (ցած ձայնով տ'Ավրօրին) բայց հօրեղբայր իմ եթէ իյնալու ըլլայ կը մեռնի։

Տ'ԱՎ. (բռնելով ձեռքը) ձգէ որ ուզածը ընէ, Աստուած մը կայ որ կը պաշտպանէ սիրահարները։

ՐԱՈՒԼ. (մինակ) սիրոյ այս աստիճան նշան մը։

ԵՒԳ. (ծռելով) Ա՜հ, տէր Աստուած։

ԱՆՆԱ. Ի՞նչ կայ դարձեալ։

ԵՒԳ. (որ արդէն մէկ երկու ոտք ելեր էր) Բայց, սրունքներս կերեւան եթէ մէկը տեսնէ։

ԱՆՆԱ. Ձգէ դուն ալ, ի՞նչ անտեղի խօսք։

ԵՒԳ. Ի՛նչու անտեղի պիտի ըլլայ, եթէ տեսնեն ամօթ չէ՞։

ԱՆՆԱ. (ագարակը նայելով) քեզի ըսի որ, խաւարը շատ թանձր է, լուսին չկայ, գիտցուք թէ տեսնեն, ի՞նչ վնաս ունի, մանաւանդ որ տեսնելու ալ արժանի են. ելիր հոգ մ'ըներ։

ԵՒԳ. (սանդուղին կէսը հասած) Աննա, չափազանց կը վախնամ։

ԱՆՆԱ. Մի՛ վախնար, արդէն կէսը հասար։

ԵՒԳ. (այս միջոցին սանդուղը կերերայ, Եւգինէ սարսափած վար կիջնէ) Ա՜հ, քիչ մնաց որ պիտի իյնայի, իրաւցնէ չպիտի կարենամ։

ԱՆՆԱ. Տէր Աստուած որչափ ալ վախկոտ են եղեր, այս կրթեալ աղջիկները. իրենց համար մասնաւոր սանդուղք պէտք է շինել (սանդուղը կը վերցնէ)։

ԵՒԳ. (Աննային որ սանդուղը կը տանի) Ի՞նչ պիտի ընես։

ԱՆՆԱ. (սանդուղը, պարտիզին մէկ վարի ծայրը պատին քով կոթնեցնելով) Այս կողմանէ, պատը բռնելով, աւելի դիւրութեամբ կելլես։

ԵՒԳ. Տեսար, ասոր խօսք չունիմ, այսպէս կրնամ ելլել. (նուագածուները նորէն ցած ձայնով շարել մինչեւ փեսարանին վերջը)։

ԱՆՆԱ. Իրաւ որ եթէ ես ըլլայի երկու րոպէին մէջ, քուաք. . . . բայց ահա կելլէ։

ՐԱՈՒԼ. (կամաց) Աներեւոյթ եղաւ, ալ չեմ տեսնար։

Տ'ԱՎ. (նոյնպէս) Լաւ ըսի քեզի։

ԵՒԳ. (որ արդէն քանի մը ոտք ելած), կարծեմ մարդ կայ, խօսելու ձայն առի։

ԱՆՆԱ. (բոլորովին ձայն է, երբեմն հոս կը գտնուի)։

Տ'ԱՎ. Որչափ ալ պատիւ կընէ մեզի այս կինը։

ԱՆՆԱ. Օ՛այլը համա՞ր։

ԵՒԳ. Պատշգամը կը բռնեմ

(վրան ելլելով) ահա վրան եմ (այս միջոցիս տ'Ավրանշ երեւան կելլէ և սաստիկ կը հազայ) Երկինք, մարդ կայ:

ԱՆՆԱ. (խորէն փախչելով) Փախչո-ղը կ'ազատի:

Տ'ԱՎ. (թատրոնին խորը քաշուելով ու ցած ձայնով) Ես եմ:

ԱՆՆԱ. (մինակ) Ծերն է եղեր:

Տ'ԱՎ. (միշտ ցած ձայնով և խնամքով) Ա՛ռ ասիկայ քեզի (քսակ մը կուտայ) այն պայմանաւ որ վազելով դըռ-նակը երթաս, Մարքիզուհին գտնես, և իրեն իմացնես, որ այս միջոցիս երիտասարդ կին մը կայ, եղբօրորդւոյս սենեակը:

ԱՆՆԱ. (խնդալով) Ի՞նչ, կուզես որ . . . . :

Տ'ԱՎ. Վերջացուր և շուտ ըրէ:

ԱՆՆԱ. Իրաւ որ շատ աղուոր աւետարան մը պիտի ըլլայ, և փառք Աստուծոյ որ իրաւ ալ է, (սանդուղը վերցնելով) ապահովութեան համար ճամբան ալ կտրենք (վազելով կերթայ, սանդուղը կը տանի):

## ՏԵՍԻԼ ԺԲ.

ԵՒԳԻՆԷ (միշտ պատշգամին վրայ) Տ'ԱՎՐԲՈՒՐ (եղբօրորդւոյն կը մօտենայ) ՐԱՕՒԼ (պզտիկին դրանը քով).

ԵՒԳ. (պատշգամէն վար նայելով) Շատ մտիկ կ'ընեմ, բայց ալ ձայն չեմ լսեր, կարելի է որ սխալած ըլլամ, (ցած ձայնով կանչելով) Աննա. Աննա, չկայ գացեր է, զիս մինակ ձգելով հոս, չեմ գիտեր թէ իջնամ . . . . բայց շատ բարձր է, ապա թէ ոչ (պատուհանը ցուցնելով) ճանապարհս շարունակէի:

Տ'ԱՎ. (ցած ձայնով Րաօուլին, որ կուզէ դէպ 'ի պատշգամը վազել և որ դժուարաւ կ'արգիլէ) բայց լռէ, դեռ ժամանակը չէ:

ԵՒԳ. (պատշգամին վրայ և պատուհանին դարձնելով). Ես եմ, Պարոն Եւգինէն քու սանուհիդ:

ՐԱՕՒԼ. (կեցած) Ալ չեմ դիմանար և կուգեմ . . . . :

Տ'ԱՎ. (զինք բռնելով և ցած) կուզես ամէնէն մեծ երջանկութիւնը ձեռքէդ փախցնել:

ՐԱՕՒԼ. (նոյնպէս) Ո՞րը:

Տ'ԱՎ. (նոյնպէս) Իմանալ թէ մինչեւ ո՞ր աստիճան սիրելի ես:

ՐԱՕՒԼ. (կայնելով և մտիկ ընելով) Ստոյգ է:

ԵՒԳ. (նորէն պատուհանը դարձնելով) Ինչ որ պահանջեցիր կատարեցի, մօրս բան մը չըսելով եկայ քու հիւրընկալութիւնդ խնդրելու:

ՐԱՕՒԼ. (առանձին) Ո՛հ, իմ սիրուն Եւգինէս:

Տ'ԱՎ. Լուռ կեցիր . . . :

ԵՒԳ. Չի պատասխաներ, ուրիշ յանցանք մը ունիմ Րաուլ. միթէ՞ դեռ սրդողած ես ինծի դէմ:

Տ'ԱՎ. (ցած ձայնով և Րաօուլին մէջքէն բռնած, որն որ կ'ուզէ դէպ 'ի պատշգամը վազել) Դեռ ատենը չէ ըսի քեզի:

ՐԱՕՒԼ. (ցած ձայնով) Բայց քառորդէ մը 'ի վեր կըսպասէ:

Տ'ԱՎ. (Բացի) Ինքը.քեզ ամիս մը սպասացուց ։

ԵԿԳ. (Դողալով) Մութ է պարան, կը մնիմ, իրաւ որ շատ կը մնիմ, հարբուխ պիտի ըլլամ ։

ԲԱՈՒԼ. (Նոյնպէս) Հարբուխ պիտի ըլլայ, կը սոսկամ ։

Տ'ԱՎ. (Մէկ արգիլելով) շատ աղէկ կըլլայ, բարկութիւնը կը շակուի ։

ԵԿԳ. Բա՛յց ինծի, Բաուլ, բա՛յց կը խնդրեմ, կը պաղատիմ (ծունր դնելով) բայց ինչո՞ւ չես բանար, համբերութիւնս կը հատնի

Տ'ԱՎ. Կը տեսնե՞ս ։

ԵԿԳ. (Բարբառելով) Ո՛հ, չէ՛ չէ՛, կը համբերեմ, կը համբերեմ ։

ԲԱՈՒԼ. Կը տեսնե՞ս ։

ԵԿԳ. Ա՛լ չպիտի նեղանամ քեզի դէմ, սակայն չափազանց դժբաղդ ըրաւ զիս, հաւատա՛ սիրելի ամուսինս, անձկալից իմ, կը հնազանդիմ, ներումն կը խնդրեմ ըրածէս, ալ ի՞նչ կուզես ասկէ աւելի, ո՛հ ներէ սիրելիդ իմ Բաուլ, եթէ չես հաւատար կերդնում ծնրադրութեամբ Աստուծոյ առջև և գըրկուս վրայ, հաւատա՛ ինձ ։

ԲԱՈՒԼ. (որ քիչ մը ատենէ 'ի վեր հօր եղբօրը հետ կը ծեծկռտէր ձեռքէն փախչելու համար, վերջապէս կ'ազատի և պոռալով) Ա՛լ բաւական է Եւգինէ, իմ ազնիւ ամուսինս ։

Տ'ԱՎ. (Բողոքով որ երթայ) սա անանկ սխալ մըն է որ համբերութիւն չի վերցըներ ։

ԵԿԳ. (սարսափած դառնալով և ահու դողով) Տէր Աստուած Բաուլը հոն, (պատշգամբէն նայելով) ի՞նչ, Պարոն, դո՞ւ ես, ի՞նչպէս վարն ես ։

ԲԱՈՒԼ. Եւ դուն սիրուն Եւգինէս վերը ։

ԵԿԳ. (շփոթելով) Ես, չեմ գիտեր, դիպուածով հոս եկայ, (կամաց կ'առնէ ու մէկէն բարբառելով) ո՛հ, չէ՛, չէ՛, ի՞նչ պէտք է պահել և ի՞նչու ամաչեմ, (վար ծըռելով հնազանդ դէմքով մը) հրամայեցիր Տէ՛ր, և ես հնազանդեցայ, իմ պարտքս էր ։

Տ'ԱՎ. Շատ աղէկ հարսս, շատ աղէկ ։

ԵԿԳ. (սարսափած) Ինքն ալ հոս է եղեր. (Բաուլ պատշգամբէն ներս կը նետուի) ։

## ՏԵՍԻԼ ԺԹ.

ՏԱՎՐՔՈՒՐ (աջ կողմը) ՄԱՐՔԻԶՈՒՀԻՆ (խորէն մտնելով) ԵԿԳԻՆԷ (միշտ պատշգամբին վրայ) ԱՆՆԱ.

ՄԱՐՔ. (զայրոյթով) Իրա՞ւ է արդեօք լսածս ։

ԵԿԳ. (պատուհանէն դառնալով և երեսը պահելով) Երկի՛նք, մայրս ալ հոս ։

ՄԱՐՔ. Կի՛ն մը այս ատեն, եղբօրորդւոյդ, փեսիս սենեակը ։

ԱՆՆԱ. (ցած ձայնով տ'Ալֆոնսին) Յանձնարարութիւնդ կատարեցի ։

Տ'ԱՎ. Տեսայ ։

ՄԱՐՔ. Սուտ է եղեր լսածս . (այս միջոցին պատուհանը կը բացուի

Եւգէնիէ ներս կը մտնէ) Թող ուզածին չափ փախչի, ես տեսայ զինքը, և ահա իրենց բաժանմանը գլխաւոր փաստ մը, ալ բան մը չիպակսիր :

Տ'ԱՎ. (ժխախոր մը շուշելով) Վըկայներէ զատ :

ՄԱՐՔ. Քիչ ատենէն վկայներն ալ կը հասնին, ես երթամ յանցաւորները բռնելու . (պատըշգամբէն ներս կը մտնէ) :

---

## ՏԵՍԻԼ Ի.

ՏԱՎՐԲՕՒՐ, ԱՆՆԱ.

Տ'ԱՎ. Ի՞նչ կայ :

ԱՆՆԱ. Այո, Մարքիզուհին առանց գլխակին ծառայներուն սպասելու ճամբայ ելաւ և անոնց ապսպրեց որ մէկէն ջահերով հոս հասնին :

Տ'ԱՎ. (յետոյ դուրս ելնելով) Այո, ամենէն աղէկ :

---

## ՏԵՍԻԼ ԻԱ.

ԱՆՆԱ, ՐԱՈՒԼ, ԵՒԳԻՆԷ, ՄԱՐՔԻԶՈՒՀԻՆ, ՏԱՎՐԲՈՒՐ.

ՄԱՐՔ. (Եւգենիէին յետոյն բռնած և պատշգամբէն դուրս ելլելով) Անշուշտ զքեզ չիկրնար փախցնեմ. Տ. տը Նանթէօյլ կամ ուրիշ մէկը որ ալ ըլլայ պէտք է իմանանք (լոյս կը ծագի, և այս միջոցին երկու ծառայ ջահեր կը բերեն) :

ՄԱՐՔ. Ի՞նչ կը տեսնամ, աղջիկըս հոս :

Տ'ԱՎ. (Րաուլը ցուցնելով) Եւ իր ամուսինը, (Եւգենիէ մէկէն Րաուլին գիրկը կը նետուի ու երեսը կը պահէ) որուն որ բաժանում մը մտքէն անգամ չ'անցներ :

ՄԱՐՔ. (զարմացած) Աղջիկս հօս, և ի՞նչպէս ելաւ հոն :

ԱՆՆԱ. (Վերջնոյ սանդուղքը կ'առնէ ու ծունկերէն Մարքիզուհոյն նայելով) Սանդուղքէն . . . . :

ՄԱՐՔ. (հպարտութեամբ) Հապա իր ամուսնականութիւնը :

ԱՆՆԱ. (Մարքիզուհոյն նման ընելով) Ամուսնականութիւնն ալ հետը :

Տ'ԱՎ. (Մարքիզուհոյն) Հաւատացէք ինծի, Տիկին, թողունք որ ուզածնին ընեն ու ալ իրենց գործին չխառնուինք . ամէն բարի ընտանեաց մէջ միշտ ամուսինը կը կառավարէ :

ԱՆՆԱ. (ցած ձայնով Եւգենիէին) Կինըն ալ կը տիրէ . . . (բարձրաձայն) առանց բան մը յայտնելու :

ԱՆՆԱ.

Ի՞նչ աննման բաղդ է Թատեր,
Երբ ժողովուրդն հանդիսական :
Անչափ գեղուի որ չեն բաւեր
Օթեակ սրահ և նստարան :
Փայլուն սանկ որ շողշողայ
Դուք հանեցէք ձեր քսակէն
Եւ թէ դուռը ձեզի նեղ գայ
Տրամ, ցանկեցէք պատուհանէն :

~~9-36~~

13

15713
2013